

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի նոյեմբերի 19-ի 2008/106/ԵՀ
հրահանգ**

Ծովագնացների վերապատրաստման նվազագույն մակարդակի մասին

(վերամշակված)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր L 323, 03.12.2008թ. էջեր 0033 - 0061

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը, եւ,
մասնավորապես, դրա 80(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [2],

Քանի որ

1) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001 թվականի ապրիլի 4-ի հրահանգը
«Ծովագնացների վերապատրաստման նվազագույն մակարդակի մասին» [3] մի շարք
դեպքերում զգալիորեն փոփոխվել է [4]: Հիմա, երբ այդ հրահանգում կատարվում են նոր
փոփոխություններ, պարզության նկատառումներից ելնելով, ցանկալի է վերամշակել տվյալ
դրույթները,

2) ծովային անվտանգության եւ ծովի աղտոտումը կանխարգելելու նպատակով Համայնքի
մակարդակով ձեռնարկվող միջոցառումները պետք է համահունչ լինեն միջազգայնորեն
համաձայնեցված կանոններին եւ ստանդարտներին,

3) Համայնքի ծովային հատվածում գիտելիքների եւ հմտությունների մակարդակի պահպանման եւ զարգացման համար անհրաժեշտ է համապատասխան ուշադրություն դարձնել ծովային աշխատանքների գծով վերապատրաստմանը եւ Համայնքում ծովագնացների կարգավիճակին,

4) ելնելով ծովային անվտանգության շահերից՝ անհրաժեշտ է ծովագնացներին ապահովել հետեւողական վերապատրաստմամբ՝ մասնագիտական որակավորման հավաստագրեր տրամադրելու նպատակով,

5) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 7-ի 2005/36/ԵՀ հրահանգը «Մասնագիտական որակավորումը ճանաչելու մասին» [5] կիրառվում է սույն Հրահանգով կարգավորվող ծովային մասնագիտությունների նկատմամբ: Դա կնպաստի՝ ապահովելու համար պարտավորությունների հետ համապատասխանությունը, որոնք սահմանված են Պայմանագրով, որը վերացնում է խոչընդոտները՝ ի շահ անդամ պետությունների միջեւ անձանց եւ ծառայությունների ազատ տեղաշարժի,

6) 2005/36/ԵՀ հրահանգի համաձայն սահմանված դիպլոմների եւ հավաստագրերի փոխադարձ ճանաչումը միշտ չէ, որ ապահովում է վերապատրաստման ստանդարտացված մակարդակ բոլոր այն ծովագնացների համար, որոնք ծառայում են անդամ պետության դրոշը կրող նավերի վրա: Ծովային անվտանգության տեսանկյունից, սա, այնուամենայնիվ, կարելի է,

7) ուստի Համայնքում ծովագնացների համար անհրաժեշտ է սահմանել վերապատրաստման նվազագույն մակարդակ: Այդ մակարդակի հիմքը պետք է կազմեն արդեն միջազգային մակարդակով համաձայնեցված վերապատրաստման ստանդարտները, այն է՝ Ծովագնացության միջազգային կազմակերպության (ԾՄԿ) 1978 թվականի կոնվենցիան «Ծովագնացների վերապատրաստման, հավաստագրման եւ հերթապահության ստանդարտների մասին» (ԾՎՀՀ կոնվենցիան)՝ վերանայված 1995 թվականին: Բոլոր անդամ պետություններն այդ Կոնվենցիայի կողմերն են,

8) անդամ պետությունները կարող են սահմանել ԾՎՀՀ կոնվենցիայով եւ սույն Հրահանգով սահմանված նվազագույն ստանդարտներից ավելի բարձր ստանդարտներ,

9) ԾՎՀՀ կոնվենցիայի կարգավորումները, որոնք սույն Հրահանգի հավելվածներն են, պետք է լրացվեն «Ծովագնացների վերապատրաստման, հավաստագրման եւ հերթապահության» կանոնագրի (ԾՎՀՀ կանոնագիրք) Ա մասում զետեղված պարտադիր դրույթներով: ԾՎՀՀ կանոնագրի Բ մասում ուղեցույց է առաջարկվում, որը նախատեսված

է աջակցելու ԾՎՀՀ կոնվենցիայի կողմերին եւ բոլոր ներգրավվածներին դրա ակտերի իրականացման, կիրառման եւ կիրարկման առումով՝ ապահովելու համար Կոնվենցիայի լիակատար եւ ամբողջական կիրառությունը մեկ միասնական եղանակով,

10) ծովային անվտանգության եւ ծովի աղտոտման կանխարգելումը բարելավելու նպատակով անհրաժեշտ է սույն Հրահանգով հերթապահ անձնակազմի նվազագույն հանգստի ժամերի վերաբերյալ դրույթներ սահմանել՝ ԾՎՀՀ կոնվենցիային համապատասխան: Այս դրույթները պետք է կիրառվեն առանց հակասելու Խորհրդի 1999 թվականի հունիսի 21-ի «Ծովագնացների աշխատաժամերի կազմակերպման մասին Եվրոպական համայնքի նավերի սեփականատերերի ասոցիացիայի (ԵՀՆՍԱ) եւ Տրանսպորտի ոլորտում աշխատողների՝ Եվրոպական միությունում գործող միությունների ֆեդերացիայի (ՖՏԱ) միջեւ կնքված համաձայնագրի մասին» 1999/63/ԵՀ հրահանգին,

11) անդամ պետությունները պետք է ձեռնարկեն եւ կիրարկեն հատուկ միջոցներ՝ կանխարգելելու եւ պատասխանատվություն նախատեսելու որակավորման հավաստագրերի հետ կապված խարդախությունների դեպքում, ինչպես նաեւ ԾՄԿ-ի շրջանակներում ջանքեր գործադրելու ամբողջ աշխարհում նման գործունեության դեմ պայքարի մասին խիստ եւ կիրարկելի համաձայնագրեր կնքելու համար,

12) ծովային անվտանգությունը բարելավելու եւ մարդկային կյանքի կորստի ու ծովի աղտոտումը կանխարգելելու նպատակով Համայնքի ջրերում նավարկող նավերի անձնակազմի անդամների միջեւ հաղորդակցությունը պետք է բարելավվի,

13) ուղեւորատար նավերի այն անձնակազմը, որը նշանակված է օգնելու ուղեւորներին արտակարգ իրավիճակներում, պետք է կարողանա հաղորդակցվել ուղեւորների հետ,

14) թունավոր կամ աղտոտող բեռներ փոխադրող լցանավեր սպասարկող անձնակազմը պետք է կարողանա արդյունավետորեն կանխարգելել վթարները եւ վերացնել վթարային իրավիճակները: Չափազանց կարեւոր է, որ նավապետի, սպաների եւ նավաստիների միջեւ հաստատվի պատշաճ հաղորդակցություն՝ սույն Հրահանգով նախատեսված պահանջներին համապատասխան,

15) անհրաժեշտ է ապահովել, որ երրորդ երկրների կողմից տրամադրված հավաստագիր կրող եւ Համայնքի նավերի վրա ծառայող ծովագնացներն ունենան ԾՎՀՀ կոնվենցիայով պահանջվող որակավորմանը համարժեք մակարդակ: Սույն Հրահանգը պետք է սահմանի անդամ պետությունների կողմից՝ երրորդ երկրների տրամադրած հավաստագրերի ճանաչման ընթացակարգերը եւ ընդհանուր չափորոշիչները՝ ելնելով ԾՎՀՀ կոնվենցիայի

շրջանակներում համաձայնեցված վերապատրաստման եւ հավաստագրման պահանջներից.

16) Ելնելով ծովային անվտանգության շահերից՝ անդամ պետությունները պետք է ճանաչեն վերապատրաստման պահանջվող մակարդակն ապացուցող որակավորումները միայն այն դեպքում, եթե դրանք տրամադրվել են ԾՎՀՀ կոնվենցիայի կողմերի կողմից կամ դրանց անունից եւ եթե այդ կողմերը ԾՄԿ Ծովում անվտանգության հարցերով կոմիտեի (ԾԱՀԿ) կողմից նույնականացվել են որպես այդ Կոնվենցիայով սահմանված ստանդարտներն իրականացրած եւ հետագայում իրականացնող երկրներ: Լրացնելու համար ժամանակի բացը՝ նախքան ԾԱՀԿ-ն կիրականացնի նման նույնականացում, անհրաժեշտ է իրականացնել հավաստագրերի նախնական ճանաչում,

17) հարկ եղած դեպքում, ծովային վերապատրաստում իրականացնող հաստատությունները, վերապատրաստման ծրագրերը եւ դասընթացները պետք է ստուգում անցնեն: Հետեւաբար, նման ստուգման համար անհրաժեշտ է չափորոշիչներ սահմանել,

18) Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն՝ իրականացնելու համար վերապատրաստման հաստատությունների կամ երրորդ երկրների վարչական մարմինների կողմից տրամադրված հավաստագրերի ճանաչման հետ կապված աշխատանքները,

19) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1406/2002 կանոնակարգով (ԵՀ) ստեղծված Եվրոպական ծովային անվտանգության գործակալությունը [7] պետք է աջակցի Հանձնաժողովին՝ ստուգելու՝ արդյոք անդամ պետությունները համապատասխանում են սույն Հրահանգով սահմանված պահանջներին,

20) անդամ պետությունները, որպես նավահանգստային մարմիններ, պետք է բարձրացնեն անվտանգության մակարդակը Համայնքի ջրային տարածքներում եւ կանխարգելեն աղտոտումն այն երրորդ երկրների դրոշը կրող նավերի առաջնահերթ ստուգման միջոցով, որոնք չեն վավերացրել ԾՎՀՀ կոնվենցիան, այսպիսով, անբարենպաստ վերաբերմունքի արժանացնելով երրորդ երկրների դրոշը կրող նավերին,

21) անհրաժեշտ է սույն Հրահանգում ներառել նավահանգստի պետական վերահսկողության մասին դրույթները, մինչեւ «Ծովով փոխադրումների մասով նավահանգստի պետական վերահսկողության մասին» Խորհրդի 95/21/ԵՀ հրահանգում փոփոխություն կկատարվի [8]՝ նավահանգստի պետական վերահսկողության մասին սույն հրահանգում ներառված դրույթներն այդ Հրահանգ փոխանցելու համար,

22) անհրաժեշտ է նախատեսել ընթացակարգեր՝ հարմարեցնելու սույն Հրահանգը միջազգային կոնվենցիաներում եւ կանոնադրքերում կատարված փոփոխություններին,

23) սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը [9] համապատասխան,

24) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է լիազորված լինի փոփոխելու սույն Հրահանգը սույն Հրահանգի նպատակներով որոշակի միջազգային կանոնադրքերի հետագա փոփոխությունները եւ Համայնքի օրենսդրության ցանկացած այլ համապատասխան փոփոխություն կիրառելու համար: Քանի որ այդ ակտերն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, դրանք պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ որոշման 5(ա) հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,

25) սույն Հրահանգում ներմուծված նոր տարրերը վերաբերում են միայն կոմիտեի ընթացակարգերին: Այդ պատճառով դրանք կարիք չունեն անդամ պետությունների կողմից փոխատեղվելու,

26) սույն Հրահանգը չպետք է հակասի III հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով՝

1. «նավապետ» նշանակում է այն անձը, ում հրամանատարության տակ է գտնվում նավը.

2. «սպա» նշանակում է նավապետից տարբեր անձնակազմի այլ անդամ, ով նշանակված է այդ պաշտոնում ազգային իրավունքով կամ կանոնակարգերով կամ, նման կարգով նշանակման բացակայության դեպքում՝ կոլեկտիվ պայմանագրով կամ ըստ ավանդույթի.
3. «տախտակամածի սպա» նշանակում է I հավելվածի II գլխի դրույթներին համապատասխան որակավորված սպա.
4. «նավապետի ավագ օգնական» նշանակում է աստիճանով նավապետին հաջորդող սպա, ում վերապահվում է նավի հրամանատարությունը նավապետի անկարողության դեպքում.
5. «մեխանիկ» նշանակում է I հավելվածի III գլխի դրույթներին համապատասխան որակավորված սպա.
6. «ավագ մեխանիկ» նշանակում է գլխավոր մեխանիկ, ով պատասխանատու է նավի մեխանիկական քարշուժի եւ մեխանիկական ու էլեկտրական կայանքների շահագործման եւ տեխնիկական սպասարկման համար.
7. «երկրորդ մեխանիկ» նշանակում է աստիճանով ավագ մեխանիկին հաջորդող մեխանիկ, ով ստանձնում է նավի մեխանիկական քարշուժի եւ մեխանիկական ու էլեկտրական կայանքների շահագործման եւ տեխնիկական սպասարկման պատասխանատվությունն ավագ մեխանիկի անկարողության դեպքում.
8. «մեխանիկի օգնական» նշանակում է այն անձը, ով վերապատրաստվում է որպես մեխանիկ եւ նշանակվում է այդ պաշտոնում ազգային իրավունքով կամ կանոնակարգերով համաձայն, ըստ նշանակվում է այդ պաշտոնում.
9. «ռադիոկապի օպերատոր» նշանակում է այն անձը, ով կրում է իրավասու մարմինների կողմից տրամադրված եւ ճանաչված համապատասխան հավաստագիր՝ համաձայն «Ռադիոկապի մասին» կանոնակարգերի.
10. «նավաստի» նշանակում է նավապետից կամ սպայից տարբեր նավի անձնակազմի այլ անդամ.
11. «ծովային նավ» նշանակում է մեկ այլ նավ, որը չի նավարկում բացառապես ներքին ջրերում կամ ալեկոծումներից պաշտպանված ջրային տարածքներում կամ դրանց կից ջրերում կամ այն տարածքներում, որոնց նկատմամբ կիրառվում են նավահանգստի մասին կանոնակարգերը.

12. «անդամ պետության դրոշը կրող նավ» նշանակում է այնպիսի նավ, որը գրանցված է անդամ պետությունում եւ կրում է դրա դրոշը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան. այն նավը, որը չի համապատասխանում այս սահմանմանը, համարվում է երրորդ երկրի դրոշը կրող նավ.

13. «մերձափնյա նավարկություններ» նշանակում է անդամ պետության շրջակայքում իրականացվող նավարկությունները, ինչպես սահմանված է այդ անդամ պետության կողմից.

14. «քարշային հզորություն» նշանակում է նավի քարշային կայանքի գումարային առավելագույն նոմինալ ելքային հզորությունը՝ արտահայտված կիլովատով, որը նշված է նավի գրանցման վկայականում կամ այլ պաշտոնական փաստաթղթում.

15. «նավթատար լցանավ» նշանակում է այնպիսի նավ, որը կառուցված է եւ օգտագործվում է նավթի ու նավթամթերքների զանգվածային փոխադրման համար.

16. «քիմիական նյութերի համար նախատեսված լցանավ» նշանակում է այնպիսի նավ, որը կառուցված էւ հարմարեցված է օգտագործվելու այն հեղուկ նյութերի զանգվածային փոխադրման համար, որոնք նշված են Վտանգավոր քիմիական բեռների զանգվածային փոխադրման միջազգային կանոնագրքի (իր թարմացված տարբերակով) 17-րդ գլխում.

17. «հեղուկացված գազերի համար նախատեսված լցանավ» նշանակում է այնպիսի նավ, որը կառուցված էւ հարմարեցված է օգտագործվելու ցանկացած հեղուկացված գազերի եւ այլ նյութերի փոխադրման համար, որոնք նշված են Գազերի փոխադրման միջազգային կանոնագրքի (իր թարմացված տարբերակով) 19-րդ գլխում.

18. «Ռադիոկապի մասին կանոնակարգեր» նշանակում է ռադիոկապի մասին վերանայված կանոնակարգեր՝ ընդունված Շարժական ռադիոկապի հարցերով ռադիոկապի համաշխարհային վարչական համաժողովի կողմից՝ իրենց թարմացված տարբերակով.

19. «ուղեւորատար նավ» նշանակում է այնպիսի ծովային նավ, որը փոխադրում է ավելի քան 12 ուղեւոր.

20. «ձկնորսական նավ» նշանակում է այնպիսի նավ, որն օգտագործվում է ծովում ձուկ եւ այլ կենդանի ռեսուրսներ որսալու համար.

21. «ԾՎՀՀ կոնվենցիա» նշանակում է Ծովային միջազգային կազմակերպության 1978 թվականի կոնվենցիան «Ծովագնացների վերապատրաստման, հավաստագրման եւ

հերթապահության ստանդարտների մասին», որը կիրառվում է տվյալ խնդիրների նկատմամբ՝ հաշվի առնելով Կոնվենցիայի VII հոդվածի անցումային դրույթները եւ 1/15 կանոնակարգը եւ, հարկ եղած դեպքում, ԾՎՀՀ կանոնագրքի կիրառելի դրույթները: Այս բոլորը կիրառվում են իրենց թարմացված տարբերակներով.

22. «ռադիոկապին առնչվող պարտականությունները» ներառում են, հարկ եղած դեպքում, հերթապահություն եւ տեխնիկական սպասարկում ու նորոգում, որոնք իրականացվում են «Ռադիոկապի մասին» կանոնակարգերին, 1974 թվականի Ծովում մարդու կյանքի անվտանգության համաձայնագրին (ՍՕԼԱՍ 74) եւ, յուրաքանչյուր անդամ պետության հայեցողությամբ, ԾՄԿ-ի առաջարկություններին համապատասխան՝ իրենց թարմացված տարբերակներով.

23. ‘ro-ro’ ուղեւորատար նավ» նշանակում է ուղեւորատար նավ, որն ունի ‘ro-ro’ բեռների համար նախատեսված տարածքներ կամ հատուկ կատեգորիայի տարածքներ, ինչպես սահմանված է ՍՕԼԱՍ 74-ում՝ իր թարմացված տարբերակով.

24. «ԾՎՀՀ կանոնագիրք» նշանակում է Ծովագնացների վերապատրաստման, հավաստագրման եւ հերթապահության կանոնագիրք, որն ընդունվել է 1995 թվականի ԾՎՀՀ համաձայնագրի կողմերի համաժողովի 2-րդ բանաձեւով՝ իր թարմացված տարբերակով.

25. «գործառույթ» նշանակում է ԾՎՀՀ կանոնագրքով սահմանված առաջադրանքների, պարտականությունների եւ պարտավորությունների խումբ, որն անհրաժեշտ է նավի շահագործման, ծովում մարդու կյանքի անվտանգության կամ ծովային միջավայրի պաշտպանության համար.

26. «ընկերություն» նշանակում է նավի սեփականատեր կամ ցանկացած այլ կազմակերպություն կամ անձ, ինչպես, օրինակ՝ տնօրենը կամ նավն առանց անձնակազմի վարձող անձը, ով նավի սեփականատիրոջից պատասխանատվություն է ստանձնել շահագործելու նավը, եւ ով այդ պատասխանատվությունն ստանձնելիս համաձայնվել է կատարելու ընկերության համար սույն Հրահանգով նախատեսված բոլոր պարտականությունները եւ պարտավորությունները.

27. «համապատասխան հավաստագիր» նշանակում է հավաստագիր, որը տրամադրվել եւ հաստատվել է սույն Հրահանգին համապատասխան եւ իրավունք է տալիս իր օրինական կրողին ծառայելու այն պաշտոնում եւ իրականացնելու պատասխանատվության ծավալին համապատասխան այն գործառույթները, որոնք նշված են հավաստագրում՝ տվյալ

նավարկությունն իրականացնող տվյալ տեսակի, տոննաժի, հզորության եւ քարշային միջոցներ ունեցող նավերի վրա.

28. «ծովային ծառայություն» նշանակում է ծառայություն նավի վրա, որի համար պետք է ունենալ համապատասխան հավաստագիր կամ այլ որակավորում.

29. «հաստատված» նշանակում է հաստատված անդամ պետության կողմից՝ սույն Հրահանգին համապատասխան.

30. «երրորդ երկիր» նշանակում է ցանկացած երկիր, որն անդամ պետություն չէ.

31. «ամիս» նշանակում է օրացուցային ամիս կամ մեկ ամսից պակաս ժամանակահատվածներից բաղկացած 30 օր:

Հոդված 2

Շրջանակը

Սույն Հրահանգը կիրառվում է սույն Հրահանգում նշված այն ծովագնացների նկատմամբ, որոնք ծառայում են անդամ պետության դրոշը կրող ծովային նավերի վրա, բացառությամբ՝

ա) ռազմական նավերի, ծովում օժանդակ նավերի եւ այլ նավերի, որոնք պատկանում են կամ շահագործվում են անդամ պետության կողմից եւ օգտագործվում են միայն պետական՝ ոչ առետրային ծառայության նպատակով,

բ) ձկնորսական նավերի,

գ) հաճույքի համար նախատեսված զբոսանավերի, որոնք օգտագործվում են ոչ առետրային նպատակներով,

դ) պարզունակ կառուցվածքով փայտե նավերի:

Հոդված 3

Վերապատրաստումը եւ հավաստագրումը

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ 2-րդ հոդվածում նշված նավերի վրա ծառայող ծովագնացների վերապատրաստվելն առնվազն ԾՎՀՀ կոնվենցիայի պահանջներին համապատասխան ապահովելու համար, ինչպես սահմանված

է սույն Հրահանգի մաս կազմող I հավելվածով եւ կրեն 4-րդ հոդվածով սահմանված հավաստագրերը կամ 1(27) կետով սահմանված համապատասխան հավաստագրերը:

2. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու, որ անձնակազմի այն անդամները, որոնք պետք է հավաստագրվեն ՍՕԼԱՍ 74-ի III/10.4 կանոնակարգին համապատասխան, վերապատրաստվեն եւ հավաստագրվեն սույն Հրահանգին համապատասխան:

Հոդված 4

Հավաստագիրը

Հավաստագիր է համարվում ցանկացած վավեր փաստաթուղթ, անկախ անվանումից, որը տրամադրվել է անդամ պետության իրավասու մարմնի կողմից կամ նրա լիազորությամբ՝ 5-րդ հոդվածին եւ I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան:

Հոդված 5

Հավաստագրերը եւ հաստատումները

1. Հավաստագրերը պետք է տրամադրվեն 11-րդ հոդվածին համապատասխան:
2. Նավապետների, սպաների եւ ռադիոկապի օպերատորների հավաստագրերը պետք է հաստատվեն անդամ պետության կողմից՝ սույն հոդվածով սահմանված կարգով:
3. Հավաստագրերը պետք է տրամադրվեն ԾՎՀՀ կոնվենցիայի 1/2 կարգավորման 1-ին պարբերությանը համապատասխան:
4. Անդամ պետությունները ռադիոկապի օպերատորների առումով կարող են՝
 - ա) «Ռադիոկապի մասին» կանոնակարգերի պահանջներին համապատասխանող հավաստագրի տրամադրման համար նախատեսված քննության մեջ ներառել համապատասխան կանոնակարգերով պահանջվող լրացուցիչ գիտելիքները. կամ
 - բ) տրամադրել առանձին հավաստագիր, որի մեջ նշված է, որ հավաստագրի տերը համապատասխան կանոնակարգերով պահանջվող լրացուցիչ գիտելիքներ ունի:

5. Անդամ պետության հայեցողությամբ՝ հաստատումները կարող են ներառվել տրամադրվող հավաստագրի ձեւաչափում, ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-1/2 բաժնում: Նման կերպ ներառվելու դեպքում հաստատումների օգտագործվող ձեւը պետք է լինի նույնը, ինչ Ա-1/2 բաժնի 1-ին պարբերությամբ սահմանված ձեւը: Այլ դեպքում հաստատումների օգտագործվող ձեւը պետք է լինի նույնը, ինչ այդ բաժնի 2-րդ պարբերությամբ սահմանված ձեւը: Հաստատումները պետք է տրամադրվեն ԾՎՀՀ կոնվենցիայի 2-րդ պարբերության IV հոդվածին համապատասխան:

6. Այն անդամ պետությունը, որը ճանաչում է հավաստագիրը՝ 19(2) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, պետք է հաստատի այդ հավաստագիրը՝ դրա ճանաչումը հավաստելու համար: Հաստատման օգտագործվող ձեւը պետք է լինի նույնը, ինչ ԾՎՀՀ կանոնագրքի Ա-1/2 բաժնի 3-րդ պարբերությամբ սահմանված ձեւը:

7. 5-րդ եւ 6-րդ պարբերություններում նշված հաստատումները՝

ա) կարող են տրամադրվել որպես առանձին փաստաթղթեր.

բ) պետք է ունենան եզակի համար՝ տարբեր հավաստագրի տրամադրումը հավաստող հաստատումներից, որոնց կարող է տրվել միեւնոյն համարը, ինչ տվյալ հավաստագրին՝ պայմանով, որ այդ համարը եզակի է եւ

գ) դադարում են կիրառվել հաստատված հավաստագրի ժամկետը լրանալուն կամ անդամ պետության, կամ երրորդ երկրի կողմից դրա հետ վերցնելուն, կասեցնելուն կամ գործողությունը դադարեցնելուն պես եւ, ցանկացած դեպքում, տրամադրման ամսաթվից հինգ տարի հետո:

8. Այն պաշտոնում, որում հավաստագրի տերն արտոնված է ծառայելու, պետք է սահմանվի հաստատման ձեւում՝ տվյալ անդամ պետության՝ անվտանգությունն ապահովող անձնակազմին ներկայացվող կիրառելի պահանջներին համապատասխան շրջանակներում:

9. Անդամ պետությունը կարող է օգտագործել ԾՎՀՀ կանոնագրքի Ա-1/2 բաժնով սահմանված ձեւաչափից տարբեր ձեւաչափ՝ պայմանով, որ պահանջվող տեղեկատվությունն առնվազն լինի հռոմեական տառատեսակով եւ արաբական թվանշաններով՝ հաշվի առնելով Ա-1/2 բաժնի համաձայն թույլատրված շեղումները:

10. 19(7) հոդվածի համաձայն՝ սույն Հրահանգով պահանջվող ցանկացած հավաստագրի բնօրինակ պետք է հասանելի լինի այն նալի վրա, որտեղ ծառայում է այդ հավաստագրի տերը:

Հոդված 6

Վերապատրաստմանը ներկայացվող պահանջները

3-րդ հոդվածի համաձայն պահանջվող վերապատրաստումը պետք է ունենա I հավելվածով պահանջվող տեսական գիտելիքներին եւ գործնական հմտություններին համապատասխան ձեւ, ինչպիսիք են, մասնավորապես, փրկարարական եւ հակահրդեհային սարքավորումների օգտագործումը, եւ հաստատվի իրավասու մարմնի կամ անդամ պետության կողմից նշանակված մարմնի կողմից:

Հոդված 7

Մերձափնյա նավարկությունը կարգավորող սկզբունքները

1. Մերձափնյա նավարկությունները սահմանելիս՝ անդամ պետությունները չպետք է սահմանեն վերապատրաստման, փորձի կամ հավաստագրման վերաբերյալ պահանջներ այն ծովագնացների նկատմամբ, որոնք ծառայում են մեկ այլ անդամ պետության կամ ԾՎՀՀ կոնվենցիայի մեկ այլ կողմի դրոշը կրելու իրավունք ունեցող եւ նման նավարկություններով զբաղվող նավերի վրա, ինչը հանգեցնում է նման ծովագնացների նկատմամբ առավել խիստ պահանջների կիրառմանը, քան այն ծովագնացների նկատմամբ, որոնք ծառայում են իրենց սեփական դրոշը կրելու իրավունք ունեցող նավերի վրա: Ոչ մի դեպքում անդամ պետությունն այլ անդամ պետության կամ ԾՎՀՀ կոնվենցիայի այլ կողմի դրոշը կրող նավերի վրա ծառայող ծովագնացների նկատմամբ չպետք է սահմանի սույն Հրահանգից դուրս լրացուցիչ պահանջներ՝ մերձափնյա նավարկությամբ չզբաղվող նավերի առումով:

2. Անդամ պետության կամ ԾՎՀՀ կոնվենցիայի այլ կողմի ավից կանոնավորապես մերձափնյա նավարկություններ կատարող անդամ պետության դրոշը կրելու իրավունք ունեցող նավերի առումով՝ այն անդամ պետությունը, որի դրոշը նավն իրավունք ունի կրելու, պետք է նման նավերի վրա ծառայող ծովագնացների նկատմամբ սահմանի վերապատրաստման, փորձի եւ հավաստագրման այնպիսի պահանջներ, որոնք առնվազն հավասար են այն անդամ պետության կամ ԾՎՀՀ կոնվենցիայի այն կողմի պահանջներին, որոնց ավից նավը շարժվում է՝ պայմանով, որ դրանք չեն գերազանցում մերձափնյա նավարկությամբ չզբաղվող նավերի առումով սույն Հրահանգի պահանջները: Այն նավերի վրա ծառայող ծովագնացները, որոնք նավարկում են անդամ պետության կողմից սահմանված «մերձափնյա նավարկության» սահմաններից դուրս եւ մուտք են գործում այդ

սահմանման մեջ չընդգրկված ջրային տարածքներ, պետք է բավարարեն սույն Հրահանգի համապատասխան պահանջները:

3. Անդամ պետությունը կարող է իր դրոշը կրելու իրավունք ունեցող նավերին հնարավորություն ընձեռել օգտվելու սույն Հրահանգի՝ մերձափնյա նավարկության վերաբերյալ դրույթների արտոնություններից, եթե այդ նավերը կանոնավորապես շարժվում են մերձափնյա նավարկությունների վերաբերյալ ԾՎՀՀ կոնվենցիայի կողմ չհանդիսացող պետության ափից, ինչպես սահմանված է այդ անդամ պետության կողմից:

4. Մերձափնյա նավարկությունները եւ դրա համար պահանջվող կրթության եւ վերապատրաստման պայմանները սահմանելիս՝ 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերություններին համապատասխան՝ անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում իրենց կողմից ընդունված դրույթների մանրամասները:

Հոդված 8

Խարդախության եւ այլ անօրինական գործողությունների կանխումը

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն եւ իրականացնեն համապատասխան միջոցներ՝ կանխելու խարդախությունն ու այլ անօրինական գործողություններ, այդ թվում՝ հավաստագրման գործընթացը կամ իրենց իրավասու մարմնի կողմից տրամադրված եւ հաստատված հավաստագրերը, եւ սահմանեն այնպիսի պատժամիջոցներ, որոնք արդյունավետ են, համաչափ եւ տարհամոզիչ:

2. Անդամ պետությունները պետք է նշանակեն ազգային մարմինների, որոնք իրավասու են հայտնաբերելու եւ պայքարելու խարդախության ու այլ անօրինական գործողությունների դեմ եւ այլ անդամ պետության ու երրորդ երկրների իրավասու մարմինների հետ փոխանակելու տեղեկատվություն ծովագնացների հավաստագրման վերաբերյալ:

Անդամ պետությունները պետք է անմիջապես այլ անդամ պետություններ եւ Հանձնաժողով ներկայացնեն նման ազգային իրավասու մարմինների տվյալները:

Անդամ պետությունները պետք է նաեւ ցանկացած երրորդ երկրի, որի հետ իրենք փոխադարձ պարտավորություններ են ստանձնել՝ ԾՎՀՀ կոնվենցիայի I/10 կարգավորման 1.2 պարբերությանը համապատասխան, անմիջապես ներկայացնեն նման ազգային իրավասու մարմինների տվյալները:

3. Այլ անդամ պետության իրավասու մարմինը պետք է ընդունող անդամ պետության պահանջով տրամադրի իր կողմից տրված ծովագնացների հավաստագրերի, համապատասխան հաստատումների կամ վերապատրաստման մասին վկայող ցանկացած այլ փաստաթղթի իսկության գրավոր հաստատում կամ մերժում:

Հոդված 9

Պատժամիջոցները եւ կարգապահական միջոցները

1. Անդամ պետությունները պետք է սահմանեն գործընթացներ եւ ընթացակարգեր՝ իրականացնելու համար տվյալ անդամ պետության կողմից տրամադրված հավաստագրեր եւ հաստատումներ կրողների կողմից եւ իրենց հավաստագրերի մասով պարտականությունների կատարման հետ կապված՝ ծովում կյանքի կամ գույքի անվտանգությանը կամ ծովային միջավայրին ուղղակիորեն սպառնացող ցանկացած զեկուցված մասնագիտական ոչ բանիմացության, գործողության կամ բացթողնման անաչառ քննություն եւ նման պատճառով նման հավաստագրերը հետ վերցնելու, կասեցնելու եւ գործողությունը դադարեցնելու, ինչպես նաեւ խարդախությունը կանխելու նպատակով:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է սահմանի պատժամիջոցներ կամ կարգապահական միջոցներ այն դեպքերի համար, երբ սույն Հրահանգը գործողության մեջ դնող սույն ազգային օրենսդրության դրույթները չեն պահպանվում իր դրոշը կրելու իրավունք ունեցող նավերի կամ տվյալ անդամ պետության կողմից պատշաճորեն հավաստագրված ծովագնացների առումով:

3. Մասնավորապես, նման պատժամիջոցները եւ կարգապահական միջոցները պետք է սահմանվեն եւ իրականացվեն հետեւյալ դեպքերում՝

ա) եթե ընկերությունը կամ նավապետն աշխատանքի են վերցրել այնպիսի անձի, ով չի կրում սույն Հրահանգով պահանջվող հավաստագիրը.

բ) եթե նավապետը թույլատրել է համապատասխան հավաստագիր, վավեր պաշտոնական թույլտվություն կամ 19(7) հոդվածով պահանջվող փաստաթղթային ապացույց չունեցող անձի իրականացնելու ցանկացած գործառույթ կամ ծառայություն ցանկացած իրավասության շրջանակներում, որը, համաձայն սույն Հրահանգի, պետք է իրականացվի պահանջվող հավաստագիրը կրող անձի կողմից. կամ

գ) եթե անձը, խարդախության կամ կեղծ փաստաթղթերի միջոցով, ձեռք է բերել պարտավորություններ՝ իրականացնելու ցանկացած գործառույթ կամ գործողություն ցանկացած իրավասության շրջանակներում, որոնք, համաձայն սույն Հրահանգի, պետք է իրականացվեն հավաստագիր կամ պաշտոնական թույլտվություն կրող անձի կողմից:

4. Այն անդամ պետությունները, որոնց իրավասության շրջանակում է գտնվում ցանկացած ընկերություն կամ ցանկացած անձ, որոնք, հստակ հիմքերով ենթադրվում է, որ պատասխանատվություն են կրել սույն Հրահանգի հետ՝ 3-րդ պարբերությամբ սահմանված ակնհայտ անհամապատասխանության համար կամ տեղյակ են դրա մասին, պետք է համագործակցության ձեռք մեկնեն ցանկացած անդամ պետության կամ ԾՎՀՀ կոնվենցիայի այլ կողմի, որը դրանց տեղեկացնում է իր իրավասության շրջանակներում վարույթ սկսելու իր մտադրության մասին:

Հոդված 10

Որակի ստանդարտները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ապահովի, որ՝

ա) բոլոր վերապատրաստման դասընթացները, մասնագիտական որակավորման գնահատումը, հավաստագրումը, հաստատումը եւ հավաստագրի գործողության ժամկետի վերսկսումը, որոնք իրականացվում են ոչ կառավարական կամ իր վերահսկողության տակ գտնվող մարմինների կողմից, շարունակաբար դիտանցվեն որակի ստանդարտների համակարգի միջոցով՝ ապահովելու սահմանված նպատակների իրականացումը, այդ թվում՝ հրահանգիչների եւ գնահատողների որակավորմանը եւ փորձին վերաբերող նպատակների.

բ) եթե իշխանությունները կամ կառավարական մարմիններն իրականացնում են նման գործողություններ, ապա առկա լինի որակի ստանդարտների համակարգ.

գ) իրականացվելիք կրթական եւ վերապատրաստման նպատակները եւ դրանց հետ կապված մասնագիտական որակավորման ստանդարտները հստակորեն սահմանվեն եւ հաստատեն ԾՎՀՀ կոնվենցիայի համաձայն պահանջվող քննություններին եւ գնահատումներին համապատասխան գիտելիքի, իմացության եւ հմտությունների մակարդակները.

դ) որակի ստանդարտների կիրառության ոլորտները ներառեն հավաստագրման համակարգերի կառավարումը, բոլոր վերապատրաստման դասընթացները եւ ծրագրերը, յուրաքանչյուր անդամ պետության կողմից կամ դրա վերահսկողության ներքո անցկացվող քննություններն ու գնահատումները եւ հրահանգիչների ու գնահատողների պահանջվող որակավորումն ու փորձը՝ հաշվի առնելով քաղաքականությունները, համակարգերը, վերահսկումը եւ որակի ապահովման ներքին ստուգումները, որոնք սահմանված են ապահովելու սահմանված նպատակների իրագործումն ապահովելու համար:

Առաջին ենթապարբերության (գ) կետում նշված նպատակները եւ դրանց հետ կապված որակի ստանդարտները կարող են սահմանվել տարբեր դասընթացների եւ վերապատրաստման ծրագրերի համար առանձին եւ պետք է ներառեն հավաստագրման համակարգի կառավարումը:

2. Անդամ պետությունները պետք է նաեւ ապահովեն, որ գիտելիքի, իմացության, հմտությունների եւ հավաստագրման համակարգի անկախ գնահատումը, ինչպես նաեւ մասնագիտական որակավորման ձեռքբերումը եւ գնահատման գործողություններն իրականացվում են առնվազն հինգ տարին մեկ անգամ այն որակավորված անձանց կողմից, որոնք ներգրավված չեն տվյալ գործողություններում՝ ստուգելու, որ՝

ա) բոլոր ներքին կառավարման վերահսկողության եւ դիտանցման միջոցներն ու հետագա քայլերը համապատասխանում են ծրագրված գործողություններին եւ փաստաթղթային ընթացակարգերին ու արդյունավետորեն ապահովում են սահմանված նպատակների իրականացումը.

բ) յուրաքանչյուր անկախ գնահատման արդյունքներ փաստաթղթավորվում են եւ գնահատված ոլորտի համար պատասխանատու անձանց ուշադրությանն են ներկայացվում.

գ) ժամանակին գործողություններ են ձեռնարկվում՝ թերություններն ուղղելու համար:

3. Տվյալ անդամ պետությունը պետք է գնահատման ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում Հանձնաժողով հաշվետվություն ներկայացնի՝ 2-րդ պարբերության համաձայն իրականացված յուրաքանչյուր գնահատման վերաբերյալ:

Առողջական վիճակի ստանդարտներ. հավաստագրերի տրամադրումը եւ գրանցումը

1. Անդամ պետությունները պետք է սահմանեն ծովագնացների առողջական վիճակի պիտանիության ստանդարտներ, մասնավորապես, տեսողության եւ լսողության վերաբերյալ:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հավաստագրերը տրամադրվեն միայն սույն հոդվածի պահանջներին համապատասխանող թեկնածուներին:

3. Հավաստագրման ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է ներկայացնի հետեւյալ բավարար ապացույցները՝

ա) իր ինքնության ապացույցը.

բ) ապացույց, որ իր տարիքը կազմում է առնվազն այնքան, որքան սահմանված է այն հավաստագրին վերաբերող I հավելվածի կարգավորումներով, որի համար հայտ է ներկայացվել.

գ) ապացույց, որ համապատասխանում է անդամ պետության կողմից սահմանված առողջական վիճակի պիտանիության ստանդարտներին, մասնավորապես, տեսողության եւ լսողության վերաբերյալ, եւ կրում է պատշաճորեն որակավորված եւ անդամ պետության իրավասու մարմնի կողմից ճանաչված բուժաշխատողի կողմից տրված՝ իր առողջական վիճակի պիտանիությունը հաստատող վավեր փաստաթուղթ.

դ) ապացույց, որ ավարտել է ծովային ծառայությունը եւ դրա հետ կապված՝ I հավելվածի կարգավորումներով սահմանված ցանկացած պարտադիր վերապատրաստման դասընթաց այն հավաստագրի համար, որի համար հայտ է ներկայացվել.

ե) ապացույց, որ բավարարում է I հավելվածի կարգավորումներով սահմանված մասնագիտական որակավորման ստանդարտները լիազորությունների, գործառույթների եւ մակարդակների առումով, որոնք պետք է նշվեն հավաստագրի հաստատման մեջ:

4. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է՝

ա) վարի գրանցամատյան կամ գրանցամատյաններ նավապետներին եւ սպաներին եւ, հարկ եղած դեպքում, նավաստիներին տրամադրվող բոլոր հավաստագրերի եւ հաստատումների համար, որոնց գործողության ժամկետն ավարտվել կամ վերսկսվել է,

գործողությունը կասեցվել կամ դադարեցվել է, կամ որոնք հայտարարվել են կորած կամ ոչնչացված, ինչպես նաև պաշտոնական թույլտվության համար.

բ) հասանելի դարձնի նման հավաստագրերի, հաստատումների եւ թույլտվությունների կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն մյուս անդամ պետություններին կամ ԾՎՀՀ կոնվենցիայի մյուս կողմերին եւ այն կազմակերպություններին, որոնք պահանջում են հավաստագրերի ճանաչման կամ նավի վրա աշխատելու նպատակով ծովագնացների կողմից իրենց ներկայացված հավաստագրերի իսկության եւ վավերականության ստուգում:

Հոդված 12

Հավաստագրերի գործողության ժամկետի վերսկսումը

1. Յուրաքանչյուր նավապետ, սպա կամ ռադիոկապի օպերատոր, որը կրում է I հավելվածի ցանկացած գլխի համաձայն ճանաչված հավաստագիր, բացի VI գլխից, եւ որը ծառայում է ծովում կամ մտադիր է վերադառնալ ծով որոշ ժամանակ ցամաքում անցկացնելուց հետո, որպեսզի շարունակի որակավորվել ծովային ծառայության համար, պետք է, առնվազն հինգ տարին մեկ անգամ՝

ա) բավարարի 11-րդ հոդվածով սահմանված՝ առողջական վիճակի ստանդարտները. եւ

բ) հաստատի իր շարունակական մասնագիտական որակավորումը՝ ԾՎՀՀ կանոնագրքի Ա-1/11 բաժնին համապատասխան:

2. Յուրաքանչյուր նավապետ, սպա եւ ռադիոկապի օպերատոր, նավերի վրա շարունակական ծովային ծառայության համար, որի վերաբերյալ առկա են միջազգայնորեն համաձայնեցված պահանջներ, պետք է հաջողությամբ անցնի հաստատված համապատասխան վերապատրաստումը:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է համեմատի որակավորման ստանդարտները, որոնք պահանջվում են թեկնածուներից մինչեւ 2002 թվականի փետրվարի 1-ը տրամադրված հավաստագրերի համար, այն ստանդարտների հետ, որոնք սահմանված են համապատասխան հավաստագրի համար ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասում, եւ պետք է սահմանի նման հավաստագրեր կրողների՝ համապատասխան կրկնակի եւ թարմացնող վերապատրաստում կամ գնահատում անցնելու անհրաժեշտությունը:

Կրկնակի եւ թարմացվող վերապատրաստման դասընթացները պետք է հաստատվեն եւ ներառեն ծովում կյանքի անվտանգության ու ծովային միջավայրի պաշտպանության վերաբերյալ համապատասխան ազգային եւ միջազգային կանոնակարգերում կատարված փոփոխությունները, ինչպես նաեւ հաշվի առնեն տվյալ որակավորման ստանդարտի ցանկացած թարմացում:

4. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է, խորհրդակցելով ներգրավված կողմերի հետ, մշակի կամ խթանի կրկնակի եւ թարմացվող վերապատրաստման դասընթացների կառուցվածքի մշակումը, ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-1/11 բաժնում:

5. Նավապետների, սպաների եւ ռադիոկապի օպերատորների գիտելիքները թարմացնելու նպատակով յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ապահովի, որ ծովում կյանքի անվտանգության եւ ծովային միջավայրի պաշտպանության վերաբերյալ ազգային եւ միջազգային կանոնակարգերում կատարված փոփոխությունների տեքստերը հասանելի լինեն իր դրոշը կրելու իրավունք ունեցող նավերի համար:

Հոդված 13

Վարժասարքերի օգտագործումը

1. Աշխատանքի կատարման ստանդարտները եւ ԾՎՀՀ կանոնագրքի Ա-1/12 բաժնում սահմանված մյուս դրույթները, ինչպես նաեւ ցանկացած հավաստագրի համար նախատեսված պահանջները, ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասով, պետք է պահպանվեն՝

ա) վարժասարքի օգտագործմամբ՝ բոլոր պարտադիր դասընթացների առումով.

բ) ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասով պահանջվող որակավորման ցանկացած այն գնահատման առումով, որն իրականացվում է վարժասարքի միջոցով.

գ) ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասով պահանջվող եւ վարժասարքի միջոցով ցուցադրվող մասնագիտական հմտությունների շարունակական ապացույցի առումով:

2. Մինչեւ 2002 թվականի փետրվարի 1-ը տեղադրված վարժասարքերը, յուրաքանչյուր անդամ պետության հայեցողությամբ, կարող են ազատվել 1-ին պարբերությունում նշված աշխատանքի կատարման ստանդարտների հետ համապատասխանության պայմանից :

Ընկերությունների պարտավորությունները

1. 2-րդ եւ 3-րդ պարբերություններին համապատասխան՝ անդամ պետությունները պետք է ընկերություններին պատասխանատվության ենթարկեն՝ սույն Հրահանգին համապատասխան ծովագնացներին իրենց նավերի վրա ծառայության նշանակելու համար եւ պետք է պահանջեն, որ յուրաքանչյուր ընկերություն ապահովի, որ

ա) իր նավերի վրա ծառայության նշանակված յուրաքանչյուր ծովագնաց կրի համապատասխան հավաստագիր՝ սույն Հրահանգի դրույթներին համապատասխան եւ ինչպես նախատեսված է անդամ պետության կողմից.

բ) իր նավերը համալրվեն անձնակազմով՝ աշխատակազմի անվտանգության նկատմամբ անդամ պետության կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան.

գ) պահպանվեն եւ հասանելի լինեն իր նավերի վրա աշխատող բոլոր ծովագնացներին վերաբերող փաստաթղթերն ու տվյալները եւ, ի թիվս այլոց, ներառեն փաստաթղթեր ու տվյալներ նրանց փորձի, վերապատրաստման, առողջական վիճակի պիտանիության ու աշխատանքային պարտականությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման վերաբերյալ.

դ) իր նավերից յուրաքանչյուրի վրա ծառայության նշանակվելիս՝ ծովագնացները ծանոթանան իրենց կոնկրետ պարտականություններին, նավի ամբողջ համակարգին, կայանքներին, սարքավորումներին, ընթացակարգերին եւ ծառայողական կամ վթարային իրավիճակներում իրենց պարտականություններին առնչվող նավի առանձնահատկություններին.

ե) նավի անձնակազմն արդյունավետորեն համակարգի իր գործողությունները վթարային իրավիճակում եւ անվտանգությանը կամ աղտոտման կանխարգելմանը, կամ դրա նվազեցմանն ուղղված կենսական կարեւորության գործառույթներ իրականացնելիս:

2. Ընկերությունները, նավապետները եւ անձնակազմի անդամները պետք է յուրաքանչյուրը պատասխանատու լինի ապահովելու, որ սույն Հոդվածով սահմանված պարտավորություններն իրականացվեն լիակատար եւ ամբողջական կերպով, եւ, անհրաժեշտության դեպքում, ձեռնարկվեն այլ նման միջոցներ՝ ապահովելու, որ անձնակազմի յուրաքանչյուր անդամ կարողանա խելամիտ եւ բանիմաց կերպով ներդրում կատարել նավի անվտանգ շահագործման մեջ:

3. Ընկերությունը պետք է, յուրաքանչյուր այն նավի նավապետին, որի նկատմամբ կիրառվում է սույն Հրահանգը, քաղաքականությունները եւ ընթացակարգերը սահմանող գրավոր հրահանգներ ներկայացնի, որոնց անհրաժեշտ է հետեւել՝ ապահովելու, որ նավի վրա նոր աշխատանքի անցած բոլոր ծովագնացներին խելամիտ հնարավորություն տրվի ծանոթանալու նավի սարքավորումներին, շահագործման ընթացակարգերին եւ իրենց պարտականությունների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ մյուս միջոցառումներին՝ նախքան այդ պարտականություններին անցնելը: Նման քաղաքականությունները եւ ընթացակարգերը պետք է ներառեն՝

ա) խելամիտ ժամանակահատվածի տրամադրում, որի ընթացքում յուրաքանչյուր նոր աշխատանքի ընդունված ծովագնաց հնարավորություն կունենա ծանոթանալու՝

i) կոնկրետ սարքավորումներին, որոնք ծովագնացը պետք է օգտագործի կամ շահագործի. կամ

ii) կոնկրետ նավի հերթապահության, անվտանգության, շրջակա միջավայրի պաշտպանության եւ վթարային իրավիճակների ընթացակարգերին ու միջոցառումներին, որոնք ծովագնացը պետք է իմանա՝ իրեն վերապահված պարտականություններն իրականացնելու համար.

բ) բանիմաց անձնակազմի անդամի նշանակում, որը պատասխանատու է ապահովելու, որ յուրաքանչյուր նոր աշխատանքի ընդունված ծովագնացի հնարավորություն տրվի ստանալու կարելի տեղեկատվությունն այն լեզվով, որը ծովագնացը հասկանում է:

Հոդված 15

Ծառայության համար պիտանիությունը

1. Հոգնածությունը կանխելու նպատակով՝ անդամ պետությունները պետք է սահմանեն եւ պարտադրեն հանգստի ժամեր հերթապահ անձնակազմի համար եւ պահանջեն հերթապահության համակարգերի այնպիսի կազմակերպում, որ հերթապահ անձնակազմի արդյունավետությունը չնվազի հոգնածության պատճառով, իսկ պարտականությունները կազմակերպվեն այնպես, որ նավարկության սկզբից առաջին հերթապահին ու նրան հաջորդող հերթափոխները բավարար չափով հանգստացած եւ ծառայության համար պիտանի լինեն:

2. Բոլոր անձինք, ովքեր նշանակվել են որպես հերթապահության պատասխանատու սպաներ կամ որպես հերթապահ նավաստի, պետք է 24 ժամվա ընթացքում ունենան առնվազն տասժամյա հանգիստ:
3. Հանգստի ժամերը կարող են բաժանվել ոչ ավելի, քան երկու ժամանակահատվածի, որոնցից մեկը պետք է կազմի առնվազն վեց ժամ:
4. 1-ին եւ 2-րդ պարբերություններով սահմանված պահանջները չպետք է պահպանվեն վթարային իրավիճակների կամ վարժանքների, կամ այլ գերակա աշխատանքային պայմանների դեպքում:
5. Չնայած 2-րդ եւ 3-րդ պարբերություններին՝ տասժամյա նվազագույն ժամանակահատվածը կարող է կրճատվել մինչեւ վեց հաջորդական ժամերի՝ պայմանով, որ նման կրճատումը չի գերազանցի երկու օրը եւ յուրաքանչյուր յոթ օրը մեկ անգամ կտրամադրվի հանգստի առնվազն 70 ժամ:
6. Անդամ պետությունները պետք է պահանջեն, որ հերթապահության ցուցակները փակցվեն հեշտ հասանելի վայրում:

Հոդված 16

Պաշտոնական թույլտվությունը

1. Բացառիկ անհրաժեշտության դեպքերում, եթե իրենց եզրակացությամբ դա վտանգ չի ներկայացնում անձանց, գույքին կամ շրջակա միջավայրին, իրավասու մարմինները կարող են պաշտոնական թույլտվություն տրամադրել կոնկրետ ծովագնացի, որպեսզի վերջինս ծառայի կոնկրետ նավի վրա՝ վեց ամիսը չգերազանցող սահմանված ժամանակահատվածով՝ ռադիոկապի օպերատորի պաշտոնից տարբեր այլ պաշտոնում, բացառությամբ «Ռադիոկապի մասին» համապատասխան կանոնակարգերով նախատեսված դեպքերի, որոնց համար ծովագնացը չի կրում համապատասխան հավաստագիր՝ պայմանով, որ այն անձը, ում տրվում է պաշտոնական թույլտվությունը, համապատասխան որակավորում ունենա՝ անվտանգ կերպով զբաղեցնելու թափուր պաշտոնը՝ բավարարելով իրավասու մարմնի պահանջները: Այնուամենայնիվ, պաշտոնական թույլտվությունները չեն տրամադրվում նավապետին կամ ավագ մեխանիկին, բացառությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքերի, եւ այդ դեպքում էլ՝ հնարավորինս կարճ ժամկետով:

2. Ցանկացած պաշտոնական թույլտվություն, որը տրվում է որեւէ պաշտոնի համար, պետք է տրամադրվի միայն պատշաճ կերպով հավաստագրված անձի՝ անմիջապես զբաղեցնելու տվյալ պաշտոնը: Եթե տվյալ պաշտոնի համար հավաստագրում չի պահանջվում, ապա պաշտոնական թույլտվությունը կարող է տրամադրվել այն անձին, ում որակավորումն ու փորձը, իրավասու մարմինների եզրակացությամբ, հստակորեն համարժեք են զբաղեցվող պաշտոնի նկատմամբ ներկայացվող պահանջներին՝ պայմանով, որ եթե նման անձը չունի համապատասխան հավաստագիր, ապա այդ անձը պետք է քննություն հանձնի, որն ընդունվում է իրավասու մարմինների կողմից որպես նման թույլտվության ապահով տրամադրման երաշխիք: Բացի դրանից՝ իրավասու մարմինները պետք է ապահովեն, որ տվյալ պաշտոնը հնարավորինս շուտ զբաղեցնի համապատասխան հավաստագիր կրող անձը:

Հոդված 17

Անդամ պետությունների պարտավորությունները՝ վերապատրաստման եւ գնահատման առումով

1. Անդամ պետությունները նշանակում են գերատեսչությունների կամ մարմինների, որոնք պետք է՝

ա) անցկացնեն 3-րդ հոդվածում նշված վերապատրաստումը.

բ) հարկ եղած դեպքում, կազմակերպեն եւ (կամ) վերահսկեն քննությունները.

գ) տրամադրեն 11-րդ հոդվածում նշված որակավորման հավաստագրերը.

դ) տրամադրեն 16-րդ հոդվածով նախատեսված թույլտվությունները:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ

ա) ծովագնացների ամբողջ վերապատրաստումը եւ գնահատումը՝

i) կառուցված լինեն գրված ծրագրերին համապատասխան, ներառյալ այնպիսի մատուցման եղանակներ եւ միջոցներ, ընթացակարգեր եւ ուսումնական նյութեր, որոնք անհրաժեշտ են՝ որակավորման սահմանված ստանդարտին հասնելու համար. եւ

ii) անցկացվեն, վերահսկվեն, գնահատվեն եւ հաստատվեն (դ), (ե) եւ (զ) կետերին համապատասխան որակավորված անձանց կողմից.

բ) նավի վրա աշխատանքի ընթացքում վերապատրաստման դասընթացներ կամ գնահատում անցկացնող անձինք գործեն այդ կերպ, միայն եթե նման դասընթացները կամ գնահատումը բացասաբար չեն անդրադառնա նավի նորմալ շահագործման վրա, եւ եթե նրանք կարող են տրամադրել իրենց ժամանակն ու ուշադրությունը դասընթացներին կամ գնահատմանը.

գ) հրահանգիչները, վերահսկողները եւ գնահատողները պատշաճորեն որակավորված լինեն դասընթացների կոնկրետ տեսակների եւ մակարդակների կամ նավի վրա, կամ ցամաքում ծովագնացների որակավորման գնահատման համար.

դ) նավի վրա կամ ցամաքում աշխատանքի ընթացքում ծովագնացի՝ սույն Հրահանգի համաձայն հավաստագրման համար անհրաժեշտ որակավորման նպատակով դասընթաց անցկացնող անձը՝

i) գնահատի դասընթացների ծրագիրը եւ հասկանա անցկացվող դասընթացի կոնկրետ տեսակի հատուկ նպատակները.

ii) որակավորված լինի անցկացվող դասընթացի առարկայի համար. եւ

iii) եթե դասընթացների ընթացքում կիրառում է վարժասարք, ապա՝

- ստացած լինի համապատասխան ցուցումներ հրահանգման մեթոդների վերաբերյալ, այդ թվում՝ վարժասարքի օգտագործման. եւ

- ունենա գործնական աշխատանքային փորձ՝ օգտագործվող վարժասարքի կոնկրետ տեսակի առումով.

ե) ցանկացած անձ, ով պատասխանատու է վերահսկելու ծովագնացի վերապատրաստումն աշխատանքի ընթացքում, որի նպատակը հավաստագրման համար անհրաժեշտ որակավորում ապահովելը, դասընթացի ծրագրի եւ անցկացվող յուրաքանչյուր տեսակի դասընթացի հատուկ նպատակների վերաբերյալ ամբողջական պատկերացում ունենալն է.

զ) ցանկացած անձ, ով կա՛մ նավի վրա, կա՛մ ցամաքում վարում է ծովագնացի որակավորման գնահատում աշխատանքի ընթացքում, որի նպատակը հավաստագրման համար անհրաժեշտ որակավորում ապահովելն է՝ համաձայն սույն Հրահանգի՝

i) ունենա գնահատվող որակավորման վերաբերյալ գիտելիքների եւ իմացության համապատասխան մակարդակ.

ii) որակավորված լինի այն առարկայի առումով, որի համար կատարվում է գնահատումը.

iii) ստացած լինի համապատասխան ցուցումներ գնահատման մեթոդների եւ փորձի վերաբերյալ.

iv) ունենա գնահատման գործնական փորձ. եւ

v) եթե անցկացվող գնահատումը ներառում է վարժասարքի կիրառում, ապա ունենա գնահատման գործնական փորձ՝ վարժասարքի կոնկրետ տեսակի առումով որը ձեռք է բերել փորձառու գնահատողի վերահսկողության տակ եւ որով բավարարում է նրա պահանջները.

է) այն դեպքում, երբ անդամ պետությունը ճանաչում է վերապատրաստման դասընթացը, այն իրականացնող հաստատությունը կամ այդ հաստատության կողմից տրված որակավորումը՝ որպես հավաստագրի տրամադրման նկատմամբ ներկայացվող իր պահանջների մի մաս, ապա հրահանգիչների եւ գնահատողների որակավորումն ու փորձն ապահովվեն 10-րդ հոդվածի որակի ստանդարտների վերաբերյալ դրույթների կիրառմամբ. նման որակավորումը, փորձը եւ որակի ստանդարտների կիրառումը պետք է ներառեն համապատասխան դասընթացներ՝ հրահանգման, ինչպես նաեւ ուսուցման եւ գնահատման մեթոդների վերաբերյալ ու պետք է բավարարեն (դ), (ե) եւ (զ) կետերի կիրառելի պահանջները:

Հոդված 18

Հաղորդակցությունը նավի վրա

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ

ա) չհակասելով (բ) եւ (դ) կետերին՝ ցանկացած ժամանակ եւ անդամ պետության դրոշը կրող բոլոր նավերի վրա առկա լինեն նավի անձնակազմի բոլոր անդամների միջեւ անվտանգության վերաբերյալ բանավոր հաղորդակցության արդյունավետ միջոցները, մասնավորապես, հաղորդագրությունները եւ հրահանգները ճշգրիտ ու ժամանակին ստանալու եւ ընկալելու մասով.

բ) անդամ պետության դրոշը կրող, ինչպես նաեւ նավարկությունն անդամ պետության նավահանգստից սկսող կամ այնտեղ ավարտող բոլոր ուղեւորատար նավերի վրա հաստատվի աշխատանքային լեզու եւ գրանցվի նավի մատյանում՝ անվտանգությանն առնչվող հարցերում անձնակազմի արդյունավետ աշխատանքն ապահովելու համար.

ընկերությունը կամ, հարկ եղած դեպքում, նավապետը, պետք է սահմանեն համապատասխան աշխատանքային լեզուն. յուրաքանչյուր ծովագնաց պետք է հասկանա եւ, անհրաժեշտության դեպքում, հրամաններ ու հրահանգներ արձակի եւ հաշվետվություն ներկայացնի այդ լեզվով.

եթե աշխատանքային լեզուն անդամ պետության պաշտոնական լեզուն չէ, ապա բոլոր փակցվող գծագրերը եւ ցուցակները պետք է թարգմանվեն աշխատանքային լեզվով.

գ) ուղեւորատար նավերի անձնակազմը, որը նշանակված է նավի կարգացուցակում՝ օգնելու ուղեւորներին վթարային իրավիճակներում, հեշտությամբ նույնացվի եւ ունենա այդ նպատակի համար բավարար հաղորդակցական հմտություններ՝ հաշվի առնելով հետեւյալ գործոններից ցանկացածի համապատասխան եւ համարժեք համադրությունը՝

i) կոնկրետ ուղեգծով փոխադրվող ուղեւորների հիմնական ազգություններին համապատասխան լեզուն կամ լեզուները.

ii) հավանականությունը, որ անգլերենի տարրական բառապաշարի օգտագործման ունակությունը կարող է օգնության կարիք ունեցող ուղեւորի հետ հաղորդակցման միջոց լինել՝ անկախ այն հանգամանքից՝ խոսում են արդյոք ուղեւորը եւ անձնակազմի անդամը մեկ ընդհանուր լեզվով, թե ոչ.

iii) վթարային իրավիճակներում այլ միջոցներով հաղորդակցվելու հնարավոր անհրաժեշտությունը (օրինակ՝ ցուցադրելու, ձեռքերի ազդանշանների միջոցով կամ ուշադրությունը հրավիրելով հրահանգների վայրին, տագնապի հավաքատեղիներին, փրկարարական սարքերին կամ տարհանման ելքերին), եթե բանավոր հաղորդակցությունը կիրառելի չէ.

iv) որքանով են ուղեւորներին անվտանգության լիարժեք հրահանգներ տրամադրվել՝ իրենց մայրենի լեզվով կամ լեզուներով.

v) այն լեզուները, որոնցով վթարային իրավիճակներում կամ վարժանքների ժամանակ կարող են տագնապի հայտարարություններ արվել ուղեւորներին կրիտիկական ցուցումներ տալու եւ մատչելի դարձնելու համար անձնակազմի անդամների՝ ուղեւորներին տրամադրվող օգնությունը.

դ) անդամ պետության դրոշը կրող նավթատար լցանավերի, քիմիական նյութեր փոխադրող նավերի եւ հեղուկացված գազեր փոխադրող նավերի վրա նավապետը, սպաները եւ

նավաստին կարողանան միմյանց հետ հաղորդակցվել ընդհանուր աշխատանքային լեզվով (լեզուներով)։

ե) նավի վրա եւ ցամաքում աշխատող մարմինների միջեւ առկա լինեն հաղորդակցման համապատասխան միջոցներ. այս հաղորդակցությունը պետք է իրականացվի ՍՕԼԱՍ 74–ի V գլխի 14–րդ կարգավորման 4–րդ պարբերությանը համապատասխան։

զ) եթե 95/21/ԵՀ հրահանգի համաձայն իրականացվում է նավահանգստի պետական հսկողություն, ապա անդամ պետությունները նույնպես ստուգեն՝ արդյոք անդամ պետությունից տարբեր այլ պետության դրոշը կրող նավերը համապատասխանում են սույն Հոդվածին։

Հոդված 19

Հավաստագրերի ճանաչումը

1. Այն ծովագնացներին, որոնք չեն կրում 4–րդ հոդվածում նշված հավաստագրերը, կարող է թույլատրվել ծառայել անդամ պետության դրոշը կրող նավերի վրա՝ պայմանով, որ իրենց համապատասխան հավաստագրերը ճանաչելու վերաբերյալ որոշում է ընդունվել սույն հոդվածի 2–6–րդ պարբերություններով սահմանված ընթացակարգերի միջոցով։

2. Անդամ պետությունը, որը նախատեսում է երրորդ երկրի կողմից հաստատման միջոցով ճանաչել նավապետին, սպային կամ ռադիոկապի օպերատորին՝ իր դրոշը կրող նավերի վրա ծառայության համար տրամադրվող հավաստագրերը, պետք է Հանձնաժողովին այդ երրորդ երկրի հավաստագրերը ճանաչելու մասին դիմում ներկայացնի՝ նշելով պատճառները։

Հանձնաժողովը, Եվրոպական ծովային անվտանգության գործակալության աջակցությամբ եւ տվյալ անդամ պետության հնարավոր ներգրավմամբ, պետք է հավաքի II հավելվածում նշված տեղեկատվությունը եւ իրականացնի վերապատրաստման եւ հավաստագրման համակարգերի գնահատում երրորդ երկրում, որը ճանաչելու մասին դիմում է ներկայացվել՝ ստուգելու՝ արդյոք տվյալ երկիրը բավարարում է ԾՎՀՀ կոնվենցիայի բոլոր պահանջները եւ արդյոք ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցները՝ կանխելու հավաստագրերի կեղծումը։

3. Հանձնաժողովը պետք է ընդունի երրորդ երկիրը ճանաչելու մասին որոշումը 28(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան՝ ճանաչման մասին դիմում ներկայացնելու օրվանից երեք ամսվա ընթացքում:

Ճանաչելու դեպքում այդ ճանաչումը վավեր է՝ 20-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Եթե առաջին ենթապարբերությամբ սահմանված ժամանակահատվածում տվյալ երրորդ երկիրը ճանաչելու մասին որոշում չի կայացվել, ապա դիմում ներկայացրած անդամ պետությունը կարող է միակողմանիորեն ճանաչել երրորդ երկիրը մինչև որոշում կկայացվի՝ 28(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

4. Իր դրոշը կրող նավերի առումով՝ անդամ պետությունը կարող է հաստատել այն երրորդ երկրների կողմից տրամադրված հավաստագրերը, որոնք ճանաչվել են Հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով II հավելվածում զետեղված դրույթների 4-րդ եւ 5-րդ կետերը:

5. Ճանաչված երրորդ երկրների կողմից տրամադրված եւ Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի «C» շարքում հրապարակված հավաստագրերի ճանաչումները մինչև 2005 թվականի հունիսի 14-ը համարվում են վավեր:

Այս ճանաչումները կարող են օգտագործվել բոլոր անդամ պետությունների կողմից, եթե հետագայում Հանձնաժողովը չեղյալ չի հայտարարել դրանք՝ համաձայն 20-րդ հոդվածի:

6. Հանձնաժողովը պետք է կազմի եւ թարմացնի ճանաչված երրորդ երկրների ցանկը: Այդ ցանկը հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի «C» շարքում:

7. Չնայած 5(6) հոդվածին՝ եթե հանգամանքները պահանջում են, ապա անդամ պետությունները կարող են, բացառությամբ «Ռադիոկապի մասին» կանոնակարգերով սահմանված դեպքերի, թույլատրել ծովագնացին ծառայելու ռադիոկապի սպայից կամ ռադիոկապի օպերատորից տարբեր այլ պաշտոնում՝ իր դրոշը կրող նավի վրա երեք ամիսը չգերազանցող ժամանակահատվածով, երրորդ երկրի պահանջների համաձայն տրամադրված եւ հաստատված համապատասխան եւ վավեր հավաստագիր կրելու դեպքում, որը, սակայն, դեռեւս չի ճանաչվել տվյալ անդամ պետության կողմից, որպեսզի համապատասխանի իր դրոշը կրող նավի վրա ծառայության համար:

Հաստատման համար իրավասու մարմիններին ներկայացված դիմումի փաստաթղթային ապացույցը պետք է հեշտ հասանելի լինի:

ԾՎՀՀ կոնվենցիայի պահանջներին անհամապատասխանությունը

1. Չնայած II հավելվածով սահմանված չափորոշիչներին՝ եթե անդամ պետությունը համարում է, որ ճանաչված երրորդ երկիրն այլևս չի համապատասխանում ԾՎՀՀ կոնվենցիայի պահանջներին, ապա այն պետք է անմիջապես այդ մասին հայտնի Հանձնաժողովին՝ ներկայացնելով հիմնավոր պատճառաբանումներ:

Հանձնաժողովը գործն անհապաղ ներկայացնում է 28(1) հոդվածում նշված Կոմիտե:

2. Չնայած II հավելվածով սահմանված չափորոշիչներին՝ եթե Հանձնաժողովը համարում է, որ երրորդ երկիրը, որի հավաստագրերը ճանաչվել են, այլևս չի համապատասխանում ԾՎՀՀ կոնվենցիայի պահանջներին, ապա այն պետք է անմիջապես դրա մասին հայտնի անդամ պետություններին՝ ներկայացնելով հիմնավոր պատճառաբանումներ:

Հանձնաժողովը պետք է գործն անհապաղ ներկայացնի 28(1) հոդվածում նշված Կոմիտե:

3. Եթե անդամ պետությունը նախատեսում է չեղյալ համարել երրորդ երկրի կողմից տրամադրված բոլոր հավաստագրերի հաստատումները, ապա այն պետք է անհապաղ հայտնի իր մտադրության մասին Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին՝ ներկայացնելով հիմնավոր պատճառաբանումներ:

4. Հանձնաժողովը, որին աջակցում է Եվրոպական ծովային անվտանգության գործակալությունը, պետք է վերագնահատի տվյալ երրորդ երկրի ճանաչումը, ստուգելով՝ արդյոք այդ երկիրը չի կատարել ԾՎՀՀ կոնվենցիայի պահանջները:

5. Եթե տեղեկություններ կան այն մասին, որ ծովում աշխատելու համար վերապատրաստում իրականացնող որեւէ կոնկրետ հաստատություն այլևս չի համապատասխանում ԾՎՀՀ կոնվենցիայի պահանջներին, ապա Հանձնաժողովը պետք է տեղեկացնի տվյալ երկրին, որ այդ երկրի հավաստագրերի ճանաչումը չեղյալ է համարվում երկու ամսվա ընթացքում, եթե միջոցներ չձեռնարկվեն՝ ապահովելու համապատասխանությունը ԾՎՀՀ կոնվենցիայի բոլոր պահանջներին հետ:

6. Ճանաչումը չեղյալ համարելու մասին որոշումը պետք է ընդունվի 28(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան՝ անդամ պետության կողմից տեղեկացնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:

Տվյալ անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ՝ կիրարկելու այդ որոշումը:

7. Հավաստագրերի ճանաչման մասին որոշումները, որոնք տրամադրվել են 5(6) հոդվածին համապատասխան՝ նախքան երրորդ երկրի կողմից տրվող հավաստագրի ճանաչումը չեղյալ համարելու մասին որոշում ընդունելու օրը, պետք է շարունակեն վավերական մնալ: Այն ծովագնացների համար, որոնք ունեն նման հաստատումներ, կարող է չպահանջվել ավելի բարձր որակավորում ճանաչող հաստատում, եթե այդ որակավորման բարձրացումը բացառապես հիմնված է ծովային լրացուցիչ փորձի վրա:

Հոդված 21

Վերագնահատումը

1. Երրորդ երկրները, որոնք ճանաչվել են համաձայն 19(3) հոդվածի առաջին ենթապարբերության մեջ նշված ընթացակարգի՝ ներառյալ 19(6) հոդվածում նշված ընթացակարգերը, պետք է կանոնավորապես եւ առնվազն հինգ տարին մեկ անգամ վերագնահատվեն Հանձնաժողովի կողմից՝ Եվրոպական ծովային անվտանգության գործակալության աջակցությամբ, ստուգելու՝ արդյոք այդ հավաստագրերը համապատասխանում են II հավելվածով սահմանված համապատասխան չափորոշիչներին եւ արդյոք ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ կանխելու հավաստագրերի կեղծումը:

2. Հանձնաժողովը պետք է երրորդ երկրների գնահատման նպատակով սահմանի առաջնային չափորոշիչներ՝ հիմնվելով նավահանգստի պետական վերահսկողության արդյունքում ստացված կատարողականի վերաբերյալ տվյալների վրա՝ համաձայն 23-րդ հոդվածի, ինչպես նաեւ հիմնվելով երրորդ երկրների կողմից՝ ԾՎՀՀ կանոնագրքի Ա-1/7 բաժնի համաձայն ներկայացվող անկախ գնահատումների մասին հաշվետվությունների վերաբերյալ տեղեկությունների վրա:

3. Հանձնաժողովը գնահատման արդյունքների մասին անդամ պետություններին հաշվետվություն է ներկայացնում:

Հոդված 22

Պետության կողմից նավահանգստի վերահսկողությունը

1. Անկախ դրոշից՝ անդամ պետության նավահանգիստներում գտնվող յուրաքանչյուր նավ, բացառությամբ 2-րդ հոդվածով բացառված նավերի, ենթակա է պետական վերահսկողության, որն իրականացնում են այդ անդամ պետության կողմից պատշաճորեն լիազորված պաշտոնյաները՝ ստուգելու համար՝ արդյոք նավերի վրա ծառայող բոլոր ծովագնացները, որոնք պետք է հավաստագրված լինեն՝ համաձայն ԾՎՀՀ կոնվենցիայի, կրում են այդ հավաստագրերը կամ ունեն համապատասխան թույլտվություններ:

2. Սույն Հրահանգի համաձայն նավահանգստի պետական վերահսկողություն իրականացնելիս՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որպեսզի կիրառվեն 95/21/ԵՀ հրահանգով սահմանված բոլոր համապատասխան դրույթները եւ ընթացակարգերը:

Հոդված 23

Պետության կողմից նավահանգստի վերահսկողության ընթացակարգերը

1. Չհակասելով 95/21/ԵՀ հրահանգին՝ 22-րդ հոդվածի համաձայն իրականացվող նավահանգստի պետական վերահսկողությունը պետք է սահմանափակվի հետևյալով՝

ա) ստուգում՝ արդյոք նավի վրա ծառայող ծովագնացը, որը պետք է հավաստագրված լինի ԾՎՀՀ կոնվենցիային համապատասխան, կրում է համապատասխան հավաստագիր կամ վավեր թույլտվություն կամ ներկայացնում է փաստաթղթային ապացույց, որ դրոշի պետության մարմիններին դիմում է ներկայացվել՝ ճանաչումը հավաստող հաստատման մասին.

բ) ստուգում՝ արդյոք նավի վրա ծառայող ծովագնացների թիվը եւ հավաստագրերը համապատասխանում են դրոշի պետության մարմինների՝ անվտանգությունն ապահովող անձնակազմին ներկայացվող պահանջներին:

2. Նավի ծովագնացների՝ հերթապահության ստանդարտները պահպանելու ունակությունը, ինչպես պահանջվում է ԾՎՀՀ կոնվենցիայով, պետք է գնահատվի ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասին համապատասխան, եթե հստակ հիմքեր կան կարծելու, որ նման ստանդարտները չեն պահպանվում՝ պայմանավորված հետևյալ պատճառներից որեւէ մեկով՝

ա) նավը բախվել է, ավի է նետվել կամ լուվել է.

բ) փոխադրվող նյութերը դատարկվել են նավից ճանապարհին, խարսխված կամ կառանված վիճակում, ինչն անօրինական է՝ համաձայն միջազգային կոնվենցիայի.

գ) նավը մանևրել է սխալ կամ ոչ ապահով կերպով, որով չեն պահպանվել ԾՄԿ-ի կողմից ընդունված ուղեգծի հաստատման միջոցները կամ անվտանգ նավարկության կանոնները եւ ընթացակարգերը.

դ) նավը շահագործվում է այլ ձեռով այնպես, որ վտանգ է ներկայացնում անձանց, գույքի եւ շրջակա միջավայրի համար.

ե) հավաստագիրը ձեռք է բերվել խարդախությամբ կամ հավաստագիր կրողն այն անձը չէ, որին ի սկզբանե տրվել էր այդ հավաստագիրը.

զ) նավը կրում է ԾՎՀՀ կոնվենցիան չվավերացրած երկրի դրոշը կամ այդ նավի նավապետը, սպան կամ նավաստին կրում են հավաստագիր, որը տրամադրվել է ԾՎՀՀ կոնվենցիան չվավերացրած երրորդ երկրի կողմից:

3. Չնայած հավաստագրի ստուգմանը՝ ըստ 2-րդ պարբերության համաձայն կատարվող գնահատման, կարող է պահանջվել, որ ծովագնացը աշխատանքի վայրում համապատասխան որակավորում ցուցաբերի : Նման ցուցադրումը կարող է ներառել ստուգում՝ արդյոք բավարարվել են շահագործման պահանջները հերթապահության ստանդարտների առումով եւ արդյոք ծովագնացի որակավորման մակարդակի շրջանակներում առկա է պատշաճ արձագանքում վթարային իրավիճակներին:

Հոդված 24

Կալանքը

Չհակասելով 95/21/ԵՀ հրահանգին՝ հետեւյալ թերություններն այնքանով, որքանով դրանք սահմանվել են պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնյայի կողմից՝ որպես անձանց, գույքին կամ շրջակա միջավայրին վտանգ ներկայացնող, պետք է, համաձայն սույն Հրահանգի, միակ պատճառը լինեն, որի հիման վրա անդամ պետությունը կարող է կալանքի տակ վերցնել նավը՝

ա) եթե ծովագնացները չեն կրում հավաստագրեր, չունեն համապատասխան հավաստագրեր, վավեր թույլտվություններ կամ չեն կարողանում ներկայացնել

փաստաթղթային ապացույց, որ դրոշի պետության մարմիններին ներկայացվել է ճանաչումը հավաստող հաստատման մասին դիմում.

բ) եթե չեն բավարարվել դրոշի պետության՝ անվտանգությունն ապահովող անձնակազմի նկատմամբ ներկայացվող կիրառելի պահանջները.

գ) եթե նավիգացիոն եւ հերթապահության համակարգերը չեն համապատասխանում նավի համար՝ դրոշի պետության կողմից սահմանված պահանջներին.

դ) եթե հերթապահությունը չի իրականացվում անվտանգ նավարկության, անվտանգության առումով ռադիոկապի եւ ծովային աղտոտումը կանխարգելելու համար կարելու է նշանակություն ունեցող սարքերի շահագործման համար որակավորված անձի կողմից.

ե) եթե չի ներկայացվում մասնագիտական որակավորման ապացույց՝ ծովագնացներին վերապահված՝ նավի անվտանգությանն առնչվող պարտականությունների մասով.

զ) եթե նավարկության սկզբում առաջին հերթափոխի եւ դրան հաջորդող հերթափոխների համար չեն նշանակվում այնպիսի անձինք, ովքեր բավարար չափով հանգստացել են եւ պիտանի են աշխատանքի համար:

Հոդված 25

Պահանջներին համապատասխանության կանոնավոր դիտանցումը

Ձեռնարկով Պայմանագրի 226-րդ հոդվածի շրջանակներում Հանձնաժողովի լիազորություններին՝ Հանձնաժողովը, որին օգնում է Եվրոպական ծովային անվտանգության գործակալությունը, պետք է կանոնավորապես եւ առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ ստուգի՝ արդյոք անդամ պետությունները բավարարում են սույն Հրահանգով սահմանված նվազագույն պահանջները:

Հոդված 26

Հաշվետվությունները

1. Հանձնաժողովը 2008 թվականի դեկտեմբերի 14-ից ոչ ուշ պետք է Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ գնահատման հաշվետվություն ներկայացնի՝ հիմնված ԾՎՀՀ կոնվենցիայի դրույթների մանրամասն վերլուծության եւ գնահատման վրա, ինչպես նաեւ

հիմնված դրա կիրարկման եւ նալի անձնակազմի վերապատրաստման մակարդակի ու անվտանգության միջեւ փոխկապակցվածության մասով ձեւավորված նոր տեսակետների վրա:

2. Հանձնաժողովը 2010 թվականի հոկտեմբերի 20-ից ոչ ուշ պետք է Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ գնահատման հաշվետվություն ներկայացնի՝ կազմված 25-րդ հոդվածի համաձայն ստացված տեղեկատվության հիման վրա:

Հաշվետվության մեջ Հանձնաժողովը պետք է վերլուծի անդամ պետությունների համապատասխանությունը սույն Հրահանգի հետ եւ, անհրաժեշտության դեպքում, առաջարկություններ անի լրացուցիչ միջոցների համար:

Հոդված 27

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն Հրահանգը կարող է փոփոխվել Հանձնաժողովի կողմից՝ սույն Հրահանգի նպատակներով կիրառելու միջազգային կանոնագրքերում կատարված հետագա փոփոխությունները, որոնք նշված են 1-ին հոդվածի՝ ուժի մեջ մտած 16-րդ, 17-րդ, 18-րդ, 23-րդ եւ 24-րդ հոդվածներում:

Սույն Հրահանգը կարող է նաեւ փոփոխվել Հանձնաժողովի կողմից՝ Համայնքի օրենսդրության մեջ կատարված համապատասխան փոփոխությունները սույն Հրահանգի նպատակներով կիրառելու համար :

Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 28(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

2. ԾՎՀՀ կոնվենցիայի նոր փաստաթղթերի կամ արձանագրությունների ընդունումից հետո Խորհուրդը, գործելով Հանձնաժողովի առաջարկի հիման վրա, հաշվի առնելով անդամ պետությունների խորհրդարանական ընթացակարգերը, ինչպես նաեւ համապատասխան ընթացակարգերը ԾՄԿ շրջանակներում, պետք է որոշում կայացնի այս նոր փաստաթղթերը կամ արձանագրությունները վավերացնելու մանրամասն միջոցառումների մասին՝ ապահովելով, որ դրանք միասնականորեն եւ միաժամանակ կիրառվեն անդամ պետություններում:

3. 1-ին հոդվածի 16-րդ, 17-րդ, 18-րդ, 21-րդ, 22-րդ եւ 24-րդ կետերում նշված միջազգային փաստաթղթերի փոփոխությունները կարող են բացառվել սույն Կանոնակարգի շրջանակից՝ համաձայն Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող կոմիտե (ԱԾՆԱԿ) ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 2099/2002 կանոնակարգի (ԵՀ) 5-րդ հոդվածի:

Հոդված 28

Կոմիտեի ընթացակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Անվտանգ ծովերի եւ նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող կոմիտե (ԱԾՆԱԿ), որը հիմնադրվել է թիվ 2099/2002 կանոնակարգով (ԵՀ):
2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:
1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է ութ շաբաթ:
3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 29

Անցումային դրույթներ

Եթե, համաձայն 12-րդ հոդվածի, անդամ պետությունը կրկին տրամադրում կամ երկարաձգում է հավաստագրերի վավերության ժամկետը, որն ի սկզբանե տրամադրել էր՝ համաձայն մինչեւ 1997 թվականի փետրվարի 1-ը կիրառվող դրույթների, ապա անդամ պետությունը կարող է իր հայեցողությամբ փոխարինել սկզբնական հավաստագրերի վրա նշված տոննաժի սահմանափակումները հետեւյալ կերպ՝

- ա) «200 համախառն ռեգիստրային տոննա» նշումը կարող է փոխարինվել «500 ռեգիստրային տոննա» նշումով.
- բ) «1600 համախառն ռեգիստրային տոննա» նշումը կարող է փոխարինվել « 3000 ռեգիստրային տոննա» նշումով:

Հոդված 30

Պատժամիջոցները

Անդամ պետությունները պետք է սահմանեն պատժամիջոցների համակարգեր՝ 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-15-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ եւ 29-րդ հոդվածների, ինչպես նաեւ I եւ II հավելվածների համաձայն ընդունված ազգային դրույթները խախտելու համար, եւ ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրանց կիրառումն: ապահովելու համար: Նախատեսված պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

Հոդված 31

Տեղեկատվության փոխանակումը

Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն բոլոր այն դրույթների տեքստերը, որոնք իրենք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

Հոդված 32

Ուժը կորցրած ճանաչելը

III հավելվածի Ա մասում նշված հրահանգներով փոփոխված՝ թիվ 2001/25/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով III հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգին կատարվող հղումները պետք է դիտարկվեն որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ եւ պետք է ընթերցվեն ըստ IV հավելվածում ներկայացված համեմատական աղյուսակի:

Հոդված 33

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 34

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2008 թվականի նոյեմբերի 19-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Հ.-Գ. Փոթերինգ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Զ. Փ. Ժույեր

[1] ՊՏ C 151, 17.06.2008թ., էջ 35:

[2] Եվրոպական պառլամենտի 2008թվականի հունիսի 17-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռեւս չի հրապարակվել) եւ Խորհրդի 2008թվականի հոկտեմբերի 20-ի որոշում:

[3] ՊՏ L 136, 18.05.2001թ., էջ 17:

[4] Տե՛ս III հավելված, Ա յմասը :

[5] ՊՏ L 255, 30.09.2005թ., էջ 22:

[6] ՊՏ L 167, 02.07.1999թ., էջ 33:

7] ՊՏ L 208, 05.08.2002թ., էջ 1:

[8] ՊՏ L 157, 07.07.1995թ., էջ 1:

[9] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

[10] ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԾՎՀՀ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ՝ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Հավելվածում նշված կանոնակարգերը լրացվում են ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասում զետեղված պարտադիր դրույթներով՝ բացառությամբ VIII/2 կարգավորման VIII գլխի:

Որեւէ կանոնակարգում հղում կատարված ցանկացած պահանջ հղում է ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասի համապատասխան բաժնին:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ծովագնացներն ունենան համապատասխան լեզվի իմացություն, ինչպես նշված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-II/1, Ա-III/1, Ա-IV/2 եւ Ա-II/4 բաժիններում, որպեսզի կարողանան կատարել իրենց որոշակի պարտականություններն ընդունող անդամ պետության դրոշմ կրող նավի վրա:

3. ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասը պարունակում է այնպիսի որակավորման ստանդարտներ, որոնք պետք է ցուցադրեն թեկնածուները որակավորման հավաստագրի տրամադրելու եւ գործողությունը վերսկսելու համար՝ համաձայն ԾՎՀՀ կոնվենցիայի դրույթների: Հստակեցնելու համար VII գլխի այլընտրանքային հավաստագրման դրույթների եւ II, III եւ IV գլուխների հավաստագրման դրույթների միջեւ կապը՝ որակավորման ստանդարտներով նախատեսված ունակությունները խմբավորվել են ըստ պատշաճի՝ հետեւյալ յոթ գործառույթների ներքո՝

1. նավարկություն.
2. բեռնավորում, բեռնաթափում եւ դասավորում.
3. նավի աշխատանքի վերահսկում եւ նավում գտնվող անձանց խնամք.
4. նավաշինարարություն.
5. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնային տեխնիկա եւ ավտոմատ կառավարման տեխնիկա.
6. տեխնիկական սպասարկում եւ վերանորոգում.

7. ռադիոկապ՝

պատասխանատվության հետեւյալ մակարդակներում՝

1. կառավարման մակարդակ.

2. շահագործման մակարդակ.

3. սպասարկման մակարդակ:

Պատասխանատվության գործառույթները եւ մակարդակները որոշվում են ԾՎՀՀ կանոնագրքի Ա մասի II, III եւ IV գլուխներում նշված՝ տվյալ որակավորման ստանդարտների աղյուսակների ենթավերնագրերով:

ԳԼՈՒԽ II

ՆԱՎԱԴԵՏԸ ԵՎ ՏԱԽՏԱԿԱՄԱԾԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Կարգավորում II/1

500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի վրա նավիգացիոն հերթափոխի պատասխանատու սպաների հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. 500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող ծովային նավերի վրա ծառայող նավիգացիոն հերթափոխի պատասխանատու յուրաքանչյուր սպա պետք է կրի համապատասխան հավաստագիր:

2. Հավաստագրմանը ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

2.1. լինի առնվազն 18 տարեկան.

2.2. ունենա առնվազն մեկ տարվա հաստատված ծովային ծառայության փորձ՝ որպես հաստատված վերապատրաստման ծրագրի մի մաս, որը ներառում է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-II/1 բաժնի պահանջները բավարարող վերապատրաստում՝ նավի վրա եւ գրանցվում է վերապատրաստման հաստատված գրանցամատյանում, կամ ունենա առնվազն երեք տարվա հաստատված ծովային ծառայության փորձ.

2.3. պահանջվող ծովային ծառայության ընթացքում իրականացրած լինի կամրջակի հերթափոխի պարտականություններ նավապետի կամ որակավորված սպայի հսկողության տակ առնվազն վեց ամիս ժամանակահատվածում.

2.4. հարկ եղած դեպքում բավարարի IV գլխում նշված կարգավորումների կիրառելի պահանջները՝ իրականացնելու ռադիոկապին առնչվող սահմանված պարտականությունները՝ «Ռադիոկապի մասին» կանոնակարգերին համապատասխան.

2.5. ստացած լինի հաստատված կրթություն եւ վերապատրաստում ու համապատասխանի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-II/1 բաժնում սահմանված որակավորման ստանդարտին:

Կարգավորում II/2

500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի վրա նավապետի եւ նավապետի ավագ օգնականի հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

Նավապետը եւ նավապետի ավագ օգնականը՝ 3000 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի վրա

1. 3000 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող ծովային նավերի վրա յուրաքանչյուր նավապետ եւ նավապետի ավագ օգնական պետք է ունենան համապատասխան հավաստագիր:

2. Հավաստագրմանը ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

2.1. բավարարի հավաստագրման պահանջները որպես նավիգացիոն հերթափոխի պատասխանատու սպա 500 եւ ավելի բ համախառն տոննաժ ունեցող նավերի վրա եւ ունենա հաստատված ծովային ծառայության փորձ այդ պաշտոնում՝

2.1.1. առնվազն 12 ամիս որպես նավապետի ավագ օգնական հավաստագրվելու համար. եւ

2.1.2. առնվազն 36 ամիս որպես նավապետ հավաստագրվելու համար. այնուամենայնիվ, այս ժամանակահատվածը կարող է կրճատվել մինչեւ 24 ամսից ոչ պակաս, եթե նման ծովային ծառայության առնվազն 12 ամիսը թեկնածուն ծառայել է որպես նավապետի ավագ օգնական.

2.2. ստացած լինի հաստատված կրթություն եւ վերապատրաստում ու համապատասխանի ԾՎՀՀ կանոնագրքի՝ 3000 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի նավապետի ու նավապետի ավագ օգնականի համար Ա-II/2 բաժնում սահմանված որակավորման ստանդարտին:

Նավապետը եւ նավապետի ավագ օգնականը՝ 500–3000 համախառն տոննաժ ունեցող նավերի վրա

3. 500–3000 համախառն տոննաժ ունեցող ծովային նավերի վրա յուրաքանչյուր նավապետ եւ նավապետի ավագ օգնական պետք է ունենան համապատասխան հավաստագիր:

4. Հավաստագրմանը ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

4.1. նավապետի ավագ օգնականի պաշտոնում հավաստագրվելու համար 500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի վրա բավարարի նավիգացիոն հերթափոխի պատասխանատու սպային ներկայացվող պահանջները՝ 500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի վրա.

4.2. նավապետի պաշտոնում հավաստագրվելու համար 500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի վրա բավարարի նավիգացիոն հերթափոխի պատասխանատու սպային ներկայացվող պահանջները 500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի վրա եւ ունենա առնվազն 36 ամսվա հաստատված ծովային ծառայության փորձ այդ պաշտոնում. այնուամենայնիվ, այս ժամանակահատվածը կարող է կրճատվել մինչեւ 24 ամսից ոչ պակաս, եթե նման ծովային ծառայության առնվազն 12 ամիսը թեկնածուն ծառայել է որպես նավապետի ավագ օգնական.

4.3. ստացած լինի հաստատված կրթություն եւ վերապատրաստում ու համապատասխանի ԾՎՀՀ կանոնագրքի՝ 500–3000 համախառն տոննաժ ունեցող նավերի նավապետի եւ նավապետի ավագ օգնականի համար Ա-II/2 բաժնում սահմանված որակավորման ստանդարտին:

Կարգավորում II/3

500–ից պակաս համախառն տոննաժ ունեցող նավերի վրա նավիգացիոն հերթափոխի պատասխանատու սպաների եւ նավապետի հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

Այն նավերը, որոնք մերձափնյա նավարկություն չեն իրականացնում

1. 500–ից պակաս համախառն տոննաժ ունեցող եւ մերձափնյա նավարկություն չիրականացնող ծովային նավերի վրա ծառայող յուրաքանչյուր նավիգացիոն հերթափոխի պատասխանատու պետք է 500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող նավերի համար ունենա համապատասխան հավաստագիր:

2. 500-ից պակաս համախառն տոննաժ ունեցող եւ մերձափնյա նավարկություն չիրականացնող ծովային նավերի վրա ծառայող յուրաքանչյուր նավապետ պետք է 500-ից 3000 համախառն տոննաժ ունեցող նավերի վրա որպես նավապետ ծառայելու համար ունենա համապատասխան հավաստագիր :

Մերձափնյա նավարկություն իրականացնող նավերը

Նավիգացիոն հերթափոխի համար պատասխանատու սպան

3. 500-ից պակաս համախառն տոննաժ ունեցող եւ մերձափնյա նավարկություն իրականացնող ծովային նավերի վրա նավիգացիոն հերթափոխի համար պատասխանատու յուրաքանչյուր սպա պետք է ունենա համապատասխան հավաստագիր:

4. Յուրաքանչյուր թեկնածու, որը հավաստագրման է ներկայացվել որպես 500-ից պակաս համախառն տոննաժ ունեցող եւ մերձափնյա նավարկություն իրականացնող ծովային նավերի վրա նավիգացիոն հերթափոխի համար պատասխանատու սպա, պետք է՝

4.1. լինի առնվազն 18 տարեկան.

4.2. անցած լինի՝

4.2.1. համապատասխան ծովային ծառայության ժամանակահատված ներառող հատուկ վերապատրաստում, ինչպես պահանջում է վարչական մարմինը. կամ

4.2.2. տախտակամածի վրա անձնակազմում առնվազն երեք տարվա հաստատված ծովային ծառայություն,

4.3. հարկ եղած դեպքում, բավարարի IV գլխի կարգավորումների կիրառելի պահանջները՝ ռադիոկապին առնչվող՝ սահմանված պարտականություններն իրականացնելու համար՝ «Ռադիոկապի մասին» կանոնակարգերին համապատասխան.

4.4. որպես 500-ից պակաս համախառն տոննաժ ունեցող եւ մերձափնյա նավարկություն իրականացնող նավերի վրա նավիգացիոն հերթափոխի համար պատասխանատու սպա՝ ստացած լինի հաստատված կրթություն եւ վերապատրաստում ու համապատասխանի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-III/3 բաժնում սահմանված որակավորման ստանդարտին:

Նավապետը

5. 500-ից պակաս համախառն տոննաժ ունեցող եւ մերձափնյա նավարկություն իրականացնող ծովային նավերի վրա ծառայող յուրաքանչյուր նավապետ պետք է ունենա համապատասխան հավաստագիր:

6. Յուրաքանչյուր թեկնածու, որը հավաստագրման է ներկայացվել որպես նավապետ՝ 500-ից պակաս համախառն տոննաժ ունեցող եւ մերձափնյա նավարկություն իրականացնող ծովային նավերի վրա, պետք է՝

6.1. լինի առնվազն 20 տարեկան.

6.2. անցած լինի առնվազն 12 ամսվա ծովային ծառայություն՝ որպես նավիգացիոն հերթափոխի պատասխանատու սպա.

6.3. ստացած լինի հաստատված կրթություն եւ վերապատրաստում ու բավարարի ԾՎՀՀ կանոնագրքի՝ 500-ից պակաս համախառն տոննաժ ունեցող եւ մերձափնյա նավարկություն իրականացնող նավերի նավապետի համար Ա-II/3 բաժնում սահմանված որակավորման ստանդարտը:

7. Բացառությունները

Եթե վարչական մարմինը համարում է, որ նավի չափսերը եւ դրա նավիգացիոն պայմաններն այնպիսին են, որոնց դեպքում սույն Կանոնակարգի եւ ԾՎՀՀ կանոնագրքի Ա-II/3 բաժնի բոլոր պահանջների համատեղ կիրառումը դառնում է անհիմն ու գործնականում ոչ կիրառելի, ապա այն կարող է այդ չափով ազատել նման նավի կամ նավերի դասի վրա ծառայող նավապետին եւ նավիգացիոն հերթափոխի համար պատասխանատու սպային որոշ պահանջներից՝ հաշվի առնելով բոլոր այն նավերի անվտանգությունը, որոնք կարող են նավարկել նույն ջրային տարածքներում:

Կարգավորում II/4

Նավիգացիոն հերթափոխի նավաստիների հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. 500 եւ ավելի համախառն տոննաժ ունեցող ծովային նավերի վրա ծառայող նավիգացիոն հերթափոխի յուրաքանչյուր նավաստի, բացի վերապատրաստում անցնող նավաստիներից եւ այն նավաստիներից, որոնց հերթապահության պարտականությունները ոչ մասնագիտական բնույթի են, պետք է պատշաճորեն հավաստագրվեն՝ նման պարտականություններ իրականացնելու համար:

2. Հավաստագրմանը ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

2.1. լինի առնվազն 16 տարեկան.

2.2. անցած լինի՝

2.2.1. հաստատված ծովային ծառայություն, որը ներառում է առնվազն վեց ամիս տեւողությամբ վերապատրաստում եւ փորձ. կամ

2.2.2. հատուկ վերապատրաստում կամ նախքան նավարկությունը կամ նավի վրա, որը ներառում է ծովային ծառայության՝ առնվազն երկու ամիս տեւողությամբ հաստատված ժամանակահատված.

2.3. բավարարի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-II/4 բաժնում սահմանված որակավորման ստանդարտը:

3. 2.2.1 եւ 2.2.2 կետերով պահանջվող ծովային ծառայությունը, վերապատրաստումը եւ փորձը պետք է զուգորդվեն նավիգացիոն հերթապահության գործառույթների հետ եւ ներառեն պարտականությունների իրականացում՝ նավապետի, նավիգացիոն հերթապահության համար պատասխանատու սպայի կամ որակավորված նավաստու ուղղակի հսկողության տակ:

4. Անդամ պետությունները կարող են համարել, որ ծովագնացները բավարարել են սույն Կանոնակարգի պահանջները, եթե նրանք առնվազն մեկ տարի ծառայել են տախտակամածի անձնակազմում՝ համապատասխան պաշտոնում, տվյալ անդամ պետությունում ԾՎՀՀ կոնվենցիան ուժի մեջ մտնելուն նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ III

ՇԱՐԺԻՉԻ ԽՑԻԿԸ

Կարգավորում III/1

Անձնակազմի կողմից կառավարվող մեքենասրահի էլեկտրամեխանիկական մասի հերթապահության համար պատասխանատու սպաների կամ անձնակազմի կողմից ոչ մշտապես կառավարվող մեքենասրահում նշանակված հերթապահ մեխանիկների հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. Անձնակազմի կողմից կառավարվող մեքենասրահի էլեկտրամեխանիկական մասի հերթապահության համար պատասխանատու յուրաքանչյուր սպա կամ անձնակազմի կողմից ոչ մշտապես կառավարվող մեքենասրահում նշանակված յուրաքանչյուր հերթապահ մեխանիկ, ովքեր ծառայում են 750 կՎտ կամ ավելի քարշային հզորությամբ քարշային կայանք ունեցող ծովային նավի վրա, պետք է ունենան համապատասխան հավաստագրեր:

2. Հավաստագրմանը ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

2.1. լինի առնվազն 18 տարեկան.

2.2. անցած լինի առնվազն վեց ամսվա ծովային ծառայություն շարժիչի խցիկում՝ ԾՎՀՀ կանոնագրքի Ա-III/1 բաժնին համապատասխան.

2.3. ստացած լինի առնվազն 30 ամսվա հաստատված կրթություն եւ վերապատրաստում, որը ներառում է վերապատրաստման հաստատված գրանցամատյանում գրանցվող վերապատրաստում՝ նավի վրա, եւ համապատասխանի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-III/1 բաժնում սահմանված որակավորման ստանդարտներին:

Կարգավորում III/2

3000 կՎտ կամ ավելի քարշային հզորությամբ քարշային կայանքներ ունեցող նավերի վրա ծառայող ավագ մեխանիկների եւ երկրորդ մեխանիկների հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. 3000 կՎտ կամ ավելի քարշային հզորությամբ քարշային կայանքներ ունեցող ծովային նավերի վրա ծառայող յուրաքանչյուր ավագ մեխանիկ եւ յուրաքանչյուր երկրորդ մեխանիկ պետք է կրի համապատասխան հավաստագիր:

2. Հավաստագրմանը ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

2.1. բավարարի հավաստագրման պահանջները՝ որպես էլեկտրամեխանիկական մասի հերթապահության համար պատասխանատու սպա եւ

2.1.1. որպես երկրորդ մեխանիկ հավաստագրվելու համար պետք է անցած լինի առնվազն 12 ամսվա հաստատված ծովային ծառայություն՝ որպես մեխանիկի օգնական կամ մեխանիկ. եւ

2.1.2. որպես ավագ մեխանիկ հավաստագրվելու համար պետք է անցած լինի առնվազն 36 ամսվա հաստատված ծովային ծառայություն, որից առնվազն 12 ամիսը պետք է ծառայած

լինի ղեկավար պաշտոնում որպես մեխանիկ՝ միաժամանակ որակավորված լինելով ծառայելու որպես երկրորդ մեխանիկ.

2.2. ստացած լինի հաստատված կրթություն եւ վերապատրաստում ու բավարարի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-III/2 բաժնում սահմանված որակավորման ստանդարտը:

Կարգավորում III/3<

750–ից 3000 կՎտ քարշային հզորությամբ քարշային կայանք ունեցող նավերի վրա ծառայող ավագ մեխանիկների եւ երկրորդ մեխանիկների հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. 750–ից 3000 կՎտ քարշային հզորությամբ քարշային կայանք ունեցող ծովային նավերի վրա ծառայող յուրաքանչյուր ավագ մեխանիկ եւ երկրորդ մեխանիկ պետք է ունենան համապատասխան հավաստագրեր:

2. Հավաստագրմանը ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

2.1. բավարարի հավաստագրման պահանջները՝ որպես էլեկտրամեխանիկական մասի հերթապահության համար պատասխանատու սպա եւ

2.1.1. որպես երկրորդ մեխանիկ հավաստագրվելու համար պետք է անցած լինի առնվազն 12 ամսվա հաստատված ծովային ծառայություն՝ որպես մեխանիկի օգնական կամ մեխանիկ. եւ

2.1.2. որպես ավագ մեխանիկ հավաստագրվելու համար պետք է անցած լինի առնվազն 24 ամսվա հաստատված ծովային ծառայություն, որից 12 ամիսը պետք է ծառայած լինի՝ որակավորված լինելով ծառայելու որպես երկրորդ մեխանիկ.

2.2. ստացած լինի հաստատված կրթություն եւ վերապատրաստում եւ համապատասխանի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-III/2 բաժնում սահմանված որակավորման ստանդարտին:

3. 3000 կՎտ կամ ավելի քարշային հզորությամբ քարշային կայանք ունեցող նավերի վրա ծառայելու որակավորում ունեցող յուրաքանչյուր մեխանիկ կարող է ծառայել որպես ավագ մեխանիկ 3000 կՎտ–ից պակաս քարշային հզորությամբ քարշային կայանք ունեցող նավերի վրա՝ պայմանով, որ պետք է անցած լինի առնվազն 12 ամիս տեւողությամբ ծովային ծառայություն՝ ղեկավար պաշտոնում որպես մեխանիկ, ինչպես նաեւ այն պայմանով, որ հավաստագիրը համապատասխանաբար հաստատված լինի:

Կարգավորում III/4

Անձնակազմի կողմից կառավարվող մեքենասրահի հերթապահության համար պատասխանատու կամ անձնակազմի կողմից ոչ մշտապես կառավարվող մեքենասրահում պարտականությունների կատարման համար նշանակված նավաստիների հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. 750 կՎտ քարշային հզորությամբ քարշային կայանք ունեցող ծովային նավերի վրա ծառայող՝ անձնակազմի կողմից կառավարվող մեքենասրահի հերթապահության համար պատասխանատու կամ անձնակազմի կողմից ոչ մշտապես կառավարվող մեքենասրահում պարտականությունների կատարման համար նշանակված յուրաքանչյուր նավաստի, բացառությամբ վերապատրաստման մեջ գտնվող նավաստիների եւ այն նավաստիների, որոնց պարտականությունները կրում են ոչ մասնագիտական բնույթ, պետք է պատշաճորեն հավաստագրված լինեն՝ նման պարտականություններ կատարելու համար:

2. Հավաստագրմանը ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

2.1. լինի առնվազն 16 տարեկան.

2.2. անցած լինի՝

2.2.1. հաստատված ծովային ծառայություն, որը ներառում է առնվազն վեց ամիս տեւողությամբ վերապատրաստում եւ փորձ. կամ

2.2.2. հատուկ վերապատրաստում կամ նախքան նավարկությունը կամ նավի վրա, որը ներառում է ծովային ծառայություն՝ առնվազն երկու ամիս տեւողությամբ հաստատված ժամանակահատվածով.

2.3. համապատասխանի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-III/4 բաժնում սահմանված որակավորման ստանդարտին:

3. 2.2.1 եւ 2.2.2 կետերով պահանջվող ծովային ծառայությունը, վերապատրաստումը եւ փորձը պետք է զուգորդվեն մեքենասրահի հերթապահության գործառույթների հետ եւ ներառեն պարտականությունների կատարում որակավորված մեխանիկի կամ որակավորված նավաստու ուղղակի հսկողության տակ :

4. Անդամ պետությունները կարող են համարել, որ ծովագնացները բավարարել են սույն Կանոնակարգի պահանջները, եթե նրանք առնվազն մեկ տարի ծառայել են մեքենայական հատվածում համապատասխան պաշտոնում տվյալ անդամ պետությունում ԾՎՀՀ կոնվենցիան ուժի մեջ մտնելուն նախորդող վերջին հինգ տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ IV

ՌԱԴԻՈԿԱԴՐԸ ԵՎ ՌԱԴԻՈԿԱԴՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Բացատրական ծանոթագրություն.

Ռադիոհեռապահությանն առնչվող պարտադիր դրույթները ներկայացված են «Ռադիոկապի մասին» կանոնակարգերում եւ ՍՕԼԱՍ 74-ում, որը փոփոխվել է: Ռադիոկապի սպասարկման դրույթները ներկայացված են ՍՕԼԱՍ 74-ում (փոփոխված) եւ Ծովային միջազգային կազմակերպության կողմից ընդունված ուղեցույցներում:

Կարգավորում IV/1

Կիրառումը

1. Բացի 2-րդ կետով նախատեսվածից՝ սույն գլխի դրույթները կիրառվում են Համաշխարհային ծովային աղետների եւ անվտանգության համակարգի (ՀԾԱԱՀ) շրջանակներում նավարկող նավերի ռադիոկապի համար պատասխանատու անձնակազմի նկատմամբ, ինչպես սահմանված է ՍՕԼԱՍ 74-ում, որը փոփոխված է:

2. Այն նավերի ռադիոկապի համար պատասխանատու անձնակազմի դեպքում, որոնցից չի պահանջվում համապատասխանել ՍՕԼԱՍ 74-ի IV գլխում նշված ՀԾԱԱՀ դրույթներին, կարիք չկա համապատասխանելու սույն գլխի պահանջներին: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է, որ այս նավերի վրայի ռադիոկապի համար պատասխանատու անձնակազմը համապատասխանի «Ռադիոկապի մասին» կանոնակարգերին: Վարչական մարմինը պետք է ապահովի, որ «Ռադիոկապի մասին» կանոնակարգերով սահմանված համապատասխան հավաստագրերը տրամադրվեն նման ռադիոկապի համար պատասխանատու անձնակազմին կամ ճանաչվեն այդ անձնակազմի մասով:

Կարգավորում IV/2

ՀԾԱԱՀ ռադիոկապի համար պատասխանատու անձնակազմի հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. ՀԾԱԱՀ-ին մասնակցության պահանջը բավարարող նավերի վրա յուրաքանչյուր անձ, ով պատասխանատու է կամ կատարում է ռադիոկապին առնչվող պարտականությունները,

պետք է կրի ՀԾԱԱՀ-ին առնչվող համապատասխան հավաստագիր, որը տրամադրվել կամ ճանաչվել է վարչական մարմնի կողմից՝ համաձայն «Ռադիոկապի մասին» կանոնակարգերի դրույթների:

2. Բացի դրանից՝ յուրաքանչյուր թեկնածու, որը սույն Կանոնակարգի համաձայն հավաստագրման է ներկայացված ծառայելու այն նավերի վրա, որոնք պետք է բավարարեն ռադիոէլեկտրական կայանքի առկայության պահանջն ըստ ՍՕԼԱՍ 74-ի, պետք է՝

2.1. լինեն առնվազն 18 տարեկան. եւ

2.2. ստացած լինեն հաստատված կրթություն եւ վերապատրաստում եւ համապատասխանեն ԾՎՀՀ կանոնագրքի Ա-IV/2 բաժնում սահմանված որակավորման ստանդարտին:

ԳԼՈՒԽ V

ՈՐՈՇԱԿԻ ՆԱՎԵՐ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կարգավորում V/1

Լցանավեր սպասարկող նավապետների, սպաների եւ նավաստիների վերապատրաստմանն ու որակավորմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. Սպաները եւ նավաստիները, որոնց վերապահվել են լցանավերի բեռնավորման եւ բեռնաթափման, ինչպես նաեւ դրանց առնչվող սարքավորումների հետ կապված պարտականությունները, պետք է ցամաքում ավարտած լինեն հրշեջ ծառայության հաստատված դասընթաց՝ բացի VI/1 կարգավորմամբ պահանջվող դասընթացից, եւ պետք է՝

1.1. անցած լինեն առնվազն երեք ամսվա հաստատված ծովային ծառայություն լցանավերի վրա, որպեսզի ձեռք բերեն անվտանգ շահագործման վերաբերյալ համապատասխան գիտելիքներ. կամ

1.2. ավարտած լինեն լցանավերի վրա ծառայելու համար նախապատրաստական հաստատված դասընթաց, որն առնվազն ներառում է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/1 բաժնում նշված եւ այդ դասընթացի համար նախատեսված ծրագիրը:

Այնուամենայնիվ, վարչական մարմինը կարող է ընդունել վերահսկողության տակ ընթացող ծովային ծառայություն, որն ընդգրկում է ավելի կարճ ժամանակահատված, քան սահմանված է 1.1 կետով՝ պայմանով, որ

1.3. այդ ընդունված ժամանակահատվածը լինի առնվազն մեկ ամիս.

1.4. լցանավն ունենա առնվազն 3000 համախառն տոննաժ.

1.5. այս ժամանակահատվածի ընթացքում լցանավի կատարած յուրաքանչյուր նավարկության տեւողությունը չգերազանցի 72 ժամը.

1.6. լցանավի շահագործման բնութագրերը եւ այս ժամանակահատվածի ընթացքում դրա կատարած նավարկությունների եւ բեռնավորման ու բեռնաթափման գործողությունների թիվն ապահովեն ձեռք բերվող գիտելիքի եւ փորձի միեւնոյն մակարդակը:

2. Նավապետները, ավագ մեխանիկները, նավապետի ավագ օգնականները, երկրորդ մեխանիկները եւ ցանկացած անձ, ով անմիջականորեն պատասխանատու է բեռնավորման, բեռնաթափման, եւ փոխադրումների ժամանակ նախազգուշական միջոցառումների ձեռնարկման կամ բեռների մշակման համար, բացի 1.1 կամ 1.2 կետերի պահանջներին համապատասխանելուց, պետք է՝

2.1. ունենա փորձ, որը համապատասխանում է այն լցանավերի վրա իրենց կատարած պարտականություններին, որի վրա ծառայում են. եւ

2.2. անցած լինի հաստատված մասնագիտական վերապատրաստման ծրագիր, որն առնվազն ներառում է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/1 բաժնում սահմանված՝ նավթատար լցանավի, քիմիական նյութեր փոխադրող լցանավի եւ հեղուկացված գազեր փոխադրող լցանավի վրա իրենց կատարած պարտականություններին համապատասխան առարկաներ:

3. Անդամ պետությունում ԾՎՀՀ կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում կարելի է համարել, որ ծովագնացները բավարարել են 2.2 կետի պահանջները, եթե նրանք նախորդ հինգ տարվա ընթացքում առնվազն մեկ տարի ժամկետով համապատասխան պաշտոնում ծառայել են տվյալ լցանավի վրա:

4. Վարչական մարմինները պետք է ապահովեն, որ 1-ին կամ 2-րդ կետին համապատասխան որակավորված նավապետներին եւ սպաներին տրամադրվի համապատասխան հավաստագիր կամ պատշաճորեն հաստատվի առկա հավաստագիրը: Նման կերպով որակավորված յուրաքանչյուր նավաստի պետք է պատշաճորեն հավաստագրված լինի:

Կարգավորում V/2

‘Ro-ro’ ուղեւորատար նավերի նավապետների, սպաների, նավաստիների եւ այլ անձնակազմի վերապատրաստմանն ու որակավորմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է նավապետների, սպաների, նավաստիների եւ անձնակազմի այլ անդամների նկատմամբ, ովքեր ծառայում են միջազգային նավարկություններ կատարող ‘ro-ro’ ուղեւորատար նավերի վրա: Վարչական մարմինները պետք է սահմանեն սույն պահանջների կիրառելիությունն ազգային նավարկություններ կատարող ‘ro-ro’ ուղեւորատար նավերի վրա ծառայող անձնակազմի նկատմամբ:

2. Նախքան ‘ro-ro’ ուղեւորատար նավերի վրա պարտականություններն ստանձնելը՝ ծովագնացները պետք է անցած լինեն 4–8–րդ կետերով պահանջվող վերապատրաստումը՝ իրենց պաշտոնին եւ պարտականություններին համապատասխան:

3. Այն ծովագնացները, որոնք պետք է վերապատրաստում անցնեն 4–րդ, 7–րդ եւ 8–րդ կետերին համապատասխան, պետք է անցնեն համապատասխան կրկնակի վերապատրաստում կամ ներկայացնեն ապացույց, որ նախորդ հինգ տարվա ընթացքում ձեռք են բերել որակավորման պահանջվող ստանդարտը:

4. Նավապետները, սպաները եւ անձնակազմի այլ անդամներ, ովքեր նշանակված են նավի կարգացուցակում՝ օգնելու ուղեւորներին վթարային իրավիճակներում ‘ro-ro’ ուղեւորատար նավերի վրա, պետք է անցած լինեն վերապատրաստում ամբոխի կառավարման վերաբերյալ՝ ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/2 բաժնի 1-ին պարբերությամբ:

5. ‘Ro-ro’ նավերի վրա ծառայող նավապետները, սպաները եւ անձնակազմի այլ անդամներ, որոնց վերապահված են հատուկ պարտականություններ եւ պարտավորություններ, պետք է

անցած լինեն ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/2 բաժնի 2-րդ պարբերության մեջ նշված նախապատրաստական դասընթացը:

6. Անձնակազմը, որն անմիջական ծառայություն է մատուցում ‘ro-ro’ ուղեւորատար նավերի ուղեւորներին՝ ուղեւորներին հատկացված տարածքում, պետք է անվտանգության վերաբերյալ անցած լինի ԾՎՀՀ կանոնագրքի A-V/2 բաժնի 3-րդ պարբերությամբ սահմանված վերապատրաստումը:

7. Նավապետները, նավապետի ավագ օգնականները, ավագ մեխանիկները, երկրորդ մեխանիկները եւ յուրաքանչյուր անձ, ովքեր անմիջական պատասխանատվություն են կրում ուղեւորների նստեցման եւ ափ իջեցման, բեռնավորման, բեռնաթափման կամ բեռների անվտանգության ապահովման, ինչպես նաեւ ‘ro-ro’ ուղեւորատար նավերի վրա նավի կորպուսի անցքերի փակման համար, պետք է անցած լինեն հաստատված վերապատրաստման դասընթաց՝ ուղեւորների անվտանգության, բեռների անվտանգության եւ կորպուսի ամբողջականության վերաբերյալ, ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնակարգի Ա-V/2 բաժնի 4-րդ պարբերությամբ:

8. Նավապետները, նավապետի ավագ օգնականները, ավագ մեխանիկները, երկրորդ մեխանիկները եւ յուրաքանչյուր անձ, ովքեր պատասխանատվություն են կրում վթարային իրավիճակներում ‘ro-ro’ ուղեւորատար նավերի վրա ուղեւորների անվտանգության համար, պետք է անցած լինեն հաստատված վերապատրաստման դասընթաց՝ կրիտիկական իրավիճակների կառավարման եւ մարդկային վարքագծի վերաբերյալ, ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/2 բաժնի 5-րդ պարբերությամբ:

9. Վարչական մարմիններն ապահովում են, որ սույն Կանոնակարգի դրույթների համաձայն, որակավորված յուրաքանչյուր անձի տրամադրվի ավարտած վերապատրաստման դասընթացի մասին փաստաթղթային ապացույց:

Կարգավորում V/3

‘Ro-ro’ ուղեւորատար նավերից տարբեր այլ նավերի վրա ծառայող նավապետների, սպաների, նավաստիների եւ անձնակազմի այլ անդամների վերապատրաստմանը եւ հավաստագրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. Սույն Կանոնակարգը կիրառվում է միջազգային նավարկություններ իրականացնող եւ 'ro-ro' ուղեւորատար նավերից տարբեր այլ նավերի վրա ծառայող նավապետների, սպաների, նավաստիների եւ այլ անձնակազմի նկատմամբ:

Վարչական մարմինները սահմանում են սույն պահանջների կիրառելիությունն ազգային նավարկություններ իրականացնող նավերի վրա ծառայող անձնակազմի նկատմամբ:

2. Նախքան ուղեւորատար նավերի վրա աշխատանքային պարտականություններ ստանձնելը՝ ծովագնացները պետք է անցած լինեն 4-8-րդ կետերով պահանջվող վերապատրաստում՝ իրենց պաշտոնին, պարտականություններին եւ պարտավորություններին համապատասխան:

3. Այն ծովագնացները, որոնք պետք է վերապատրաստվեն 4-րդ, 7-րդ եւ 8-րդ կետերին համապատասխան, պետք է առնվազն հինգ տարին մեկ անգամ անցնեն համապատասխան կրկնակի վերապատրաստում կամ ապացույց ներկայացնեն, որ նախորդ հինգ տարվա ընթացքում ձեռք են բերել որակավորման համար պահանջվող ստանդարտը:

4. Անձնակազմը, որը նշանակված է նավի կարգացուցակում՝ ուղեւորատար նավերի վրա ուղեւորներին վթարային իրավիճակներում օգնելու համար, պետք է վերապատրաստում անցած լինի ամբոխի կառավարման վերաբերյալ, ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/3 բաժնի 1-ին պարբերությամբ:

5. Ուղեւորատար նավերի վրա ծառայող նավապետները, սպաները եւ անձնակազմի այլ անդամներ, ում վերապահված են հատուկ պարտականություններ եւ պարտավորություններ, պետք է անցած լինեն ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/3 բաժնի 2-րդ պարբերությամբ նշված նախապատրաստական դասընթացը:

6. Անձնակազմը, որն անմիջական ծառայություն է մատուցում ուղեւորատար նավերի ուղեւորներին՝ ուղեւորներին հատկացված տարածքում, պետք է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/3 բաժնի 3-րդ պարբերությամբ սահմանված՝ անվտանգության վերաբերյալ վերապատրաստում անցած լինի :

7. Նավապետները, նավապետի ավագ օգնականները եւ յուրաքանչյուր անձ, ովքեր անմիջական պատասխանատվություն են կրում ուղեւորների նստեցման եւ ափ իջեցման համար, պետք է ուղեւորների անվտանգության վերաբերյալ անցած լինեն հաստատված

վերապատրաստման դասընթաց, ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնակարգի Ա-V/3 բաժնի 4-րդ պարբերությամբ:

8. Նավապետները, նավապետի ավագ օգնականները, ավագ մեխանիկները, երկրորդ մեխանիկները եւ յուրաքանչյուր անձ, ովքեր պատասխանատվություն են կրում ուղեւորատար նավերի վրա ուղեւորների անվտանգության համար վթարային իրավիճակներում, պետք է անցած լինեն հաստատված վերապատրաստման դասընթաց՝ կրիտիկական իրավիճակների կառավարման եւ մարդկային վարքագծի վերաբերյալ, ինչպես սահմանված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-V/3 բաժնի 5-րդ պարբերությամբ:

9. Վարչական մարմիններն ապահովում են, որ սույն Կանոնակարգի դրույթների համաձայն՝ որակավորված յուրաքանչյուր անձի տրամադրվի ավարտած վերապատրաստման դասընթացի փաստացի ապացույց:

ԳԼՈՒԽ VI

ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ, ԲԺՇԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԸ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Կարգավորում VI/1

Բոլոր ծովագնացների նախապատրաստմանը, անվտանգության հիմունքների վերաբերյալ վերապատրաստմանը եւ հրահանգմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

Ծովագնացները պետք է անցնեն նախապատրաստում, անվտանգության հիմունքների վերաբերյալ վերապատրաստում կամ ծանոթացում՝ ԾՎՀՀ կանոնագրքի Ա-VI/1 բաժնին համապատասխան, եւ պետք է համապատասխանեն դրանով սահմանված որակավորման համապատասխան ստանդարտին:

Կարգավորում VI/2

Փրկարարական նավերի, փրկանավակների եւ արագընթաց փրկանավակների շահագործման համար որակավորման հավաստագրերի տրամադրմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. Փրկարարական նավերի եւ արագընթաց փրկանավակներից տարբեր այլ փրկանավակների շահագործման հմտությունների համար հավաստագրման համար ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

1.1. լինի առնվազն 18 տարեկան.

1.2. անցած լինի առնվազն 12 ամիս տեւողությամբ հաստատված ծովային ծառայություն կամ հաստատված վերապատրաստման դասընթաց եւ առնվազն վեց ամիս տեւողությամբ ծովային ծառայություն.

1.3. համապատասխանի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-VI/2 բաժնի 1-ին պարբերությամբ սահմանված՝ փրկարարական նավերի եւ փրկանավակների շահագործման հմտությունների մասին վկայող հավաստագրերի համար սահմանված որակավորման ստանդարտին:

2. Արագընթաց փրկանավակների շահագործման հմտությունների համար հավաստագրման համար ներկայացված յուրաքանչյուր թեկնածու պետք է՝

2.1. ունենա փրկարարական նավերի եւ արագընթաց փրկանավակներից տարբեր այլ փրկանավակների շահագործման հմտությունների հավաստագիր.

2.2. անցած լինի հաստատված վերապատրաստման դասընթաց.

2.3. համապատասխանի արագընթաց փրկանավակների շահագործման հմտությունների հավաստագրի համար որակավորման ստանդարտին՝ սահմանված ԾՎՀՀ կանոնագրքի Ա-VI/2 բաժնի 5-րդ պարբերությամբ:

Կարգավորում VI/3

Հակահրդեհային առաջավոր տեխնիկայի համար վերապատրաստմանը ներկայացվող նվազագույն պարտադիր պահանջները

1. Այն ծովագնացները, որոնք նշանակված են հակահրդեհային գործողությունները վերահսկելու համար, պետք է հակահրդեհային առաջավոր տեխնիկայի վերաբերյալ հաջողությամբ վերապատրաստում անցած լինեն , որտեղ առանձնահատուկ կերպով շեշտադրված են կազմակերպչական աշխատանքները, ռազմավարությունը եւ ղեկավարումը՝ ԾՎՀՀ կանոնագրքի Ա-VI/3 բաժնի դրույթներին համապատասխան, եւ պետք է համապատասխանեն այնտեղ նշված որակավորման ստանդարտին:

2. Եթե տրամադրվող հավաստագրի համար պահանջվող որակավորումը հակահրդեհային առաջավոր տեխնիկայի վերաբերյալ վերապատրաստում չի ներառում, ապա, հարկ եղած դեպքում, պետք է տրամադրվի հատուկ հավաստագրի կամ փաստաթղթային ապացույց, որտեղ նշված է, որ դրա կրողը հակահրդեհային առաջավոր տեխնիկայի վերաբերյալ վերապատրաստման դասընթաց է անցել:

Կարգավորում VI/4

Առաջնային բժշկական օգնությանը եւ բժշկական խնամքին առնչվող նվազագույն պարտադիր պահանջները

1. Այն ծովագնացները, որոնք նշանակված են նավի վրա առաջնային բժշկական օգնություն տրամադրելու համար, պետք է համապատասխանեն առաջնային բժշկական օգնության տրամադրման որակավորման ստանդարտին՝ սահմանված ԾՎՀՀ կանոնագրքի Ա-VI/4 բաժնի 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերություններով:

2. Այն ծովագնացները, որոնք նշանակված են նավի վրա բժշկական խնամք տրամադրելու համար, պետք է համապատասխանեն նավերի վրա բժշկական օգնության տրամադրման որակավորման ստանդարտին՝ սահմանված ԾՎՀՀ կանոնագրքի Ա-VI/4 բաժնի 4-րդ, 5-րդ եւ 6-րդ պարբերություններով:

3. Եթե տրամադրվող հավաստագրի համար պահանջվող որակավորումը չի ներառում առաջնային բժշկական օգնության կամ բժշկական խնամքի վերապատրաստում, ապա, հարկ եղած դեպքում, պետք է տրամադրվի հատուկ հավաստագրի կամ փաստաթղթային ապացույց, որտեղ նշված է, որ դրա կրողն անցել է առաջնային բժշկական օգնության կամ բժշկական խնամքի վերապատրաստման դասընթաց:

ԳԼՈՒԽ VII

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

Կարգավորում VII/1

Այլընտրանքային հավաստագրերի տրամադրումը

1. Չնայած հավաստագրմանը ներկայացվող՝ սույն հավելվածի II եւ III գլուխներով սահմանված պահանջներին, անդամ պետությունները կարող են իրենց ընտրությամբ տրամադրել կամ արտոնել այս գլուխների կարգավորումներով նշված հավաստագրերից տարբեր այլ հավաստագրերի տրամադրումը՝ պայմանով, որ՝

1.1. հավաստագրերում եւ հաստատումներում նշվող համապատասխան գործառույթները եւ պատասխանատվության մակարդակներն ընտրվեն եւ նույնական լինեն ԾՎՀՀ կանոնագրքի Ա-II/1, Ա-II/2, Ա-II/3, Ա-II/4, Ա-III/1, Ա-III/2, Ա-III/3, Ա-III/4 եւ Ա-IV/2 բաժիններում նշվածների հետ.

1.2. թեկնածուները ստացած լինեն հաստատված կրթություն եւ անցած լինեն հաստատված վերապատրաստում ու համապատասխանեն ԾՎՀՀ կանոնագրքի համապատասխան բաժիններում եւ այդ կանոնագրքի Ա-VII/1 բաժնում սահմանված որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջներին այն գործառույթների եւ մակարդակների համար, որոնք պետք է նշվեն հավաստագրերի եւ դրանց հաստատումների վրա.

1.3. թեկնածուներն անցած լինեն հաստատված ծովային ծառայություն, որը համապատասխանում է հավաստագրում նշվող գործառույթների կատարմանը եւ մակարդակներին: Ծովային ծառայության նվազագույն տեւողությունը պետք է համարժեք լինի սույն հավելվածի II եւ III գլուխներով սահմանված ծովային ծառայության տեւողությանը: Այնուամենայնիվ, ծովային ծառայության նվազագույն տեւողությունը պետք է լինի ոչ պակաս, քան սահմանված է ԾՎՀՀ կանոնագրքի Ա-VII/2 բաժնում:

1.4. հավաստագրման ներկայացված թեկնածուները, որոնք պետք է իրականացնեն նավիգացիոն գործառույթը շահագործման մակարդակով, պետք է, հարկ եղած դեպքում, բավարարեն IV գլխի կանոնակարգերի կիրառելի պահանջները՝ իրականացնելու համար ռադիոկապին առնչվող պարտականությունները՝ «Ռադիոկապի մասին» կանոնակարգերին համապատասխան.

1.5. հավաստագրերը տրամադրվեն 11-րդ հոդվածին եւ ԾՎՀՀ կանոնագրքի VII գլխում սահմանված դրույթներին համապատասխան:

2. Արգելվում է հավաստագրերի տրամադրումը համաձայն սույն գլխի, քանի դեռ անդամ պետությունը Հանձնաժողովին չի փոխանցել ԾՎՀՀ կոնվենցիայով պահանջվող տեղեկատվությունը:

Կարգավորում VII/2

Ծովագնացների հավաստագրումը

Յուրաքանչյուր ծովագնաց, ով իրականացնում է ԾՎՀՀ կանոնագրքի II գլխի Ա-II/1, Ա-II/2, Ա-II/3 or ԱII/4 աղյուսակներում կամ III գլխի Ա-III/1, Ա-III/2, Ա-III/4 աղյուսակներում կամ IV գլխի A-IV/2 աղյուսակում նշված ցանկացած գործառույթ կամ գործառույթների խումբ, պետք է ունենա համապատասխան հավաստագիր:

Կարգավորում VII/3

Այլընտրանքային հավաստագրերի տրամադրումը կարգավորող սկզբունքները

1. Այն անդամ պետությունը, որն իր ընտրությամբ տրամադրում է կամ արտոնում է այլընտրանքային հավաստագրերի տրամադրումը, պետք է ապահովի, որ պահպանվեն հետևյալ սկզբունքները՝

1.1. արգելվում է կիրառել այլընտրանքային հավաստագրման ցանկացած համակարգ, եթե այն չի ապահովում ծովում անվտանգության այնպիսի աստիճան եւ աղտոտումը կանխարգելող այնպիսի ազդեցություն, որոնք առնվազն համարժեք են այլ գլուխներով նախատեսվածներին.

1.2. սույն գլխի համաձայն տրամադրվող այլընտրանքային հավաստագրման համար իրականացվող ցանկացած միջոցառում պետք է նախատեսի հավաստագրերի փոխարինելիությունն այլ գլուխների համաձայն տրամադրված հավաստագրերի հետ:

2. 1-ին կետում նշված փոխարինելիության սկզբունքը պետք է ապահովի, որ՝

2.1. II եւ (կամ) III գլուխների միջոցառումների, ինչպես նաեւ VII գլխի համաձայն, որակավորված ծովագնացները կարողանան ծառայել այն նավերի վրա, որոնք ունեն նավի կազմակերպման ավանդական կամ այլ ձեւեր.

2.2. ծովագնացները վերապատրաստում անցնեն նավի վրա ոչ միայն կոնկրետ աշխատանքների իրականացման մասով, այլեւ այնպես, որ կարողանան տեղափոխել իրենց հմտություններն այլ վայրեր:

3. Սույն գլխի դրույթների համաձայն ցանկացած հավաստագիր տրամադրելիս՝ պետք է հաշվի առնել հետևյալ սկզբունքները՝

3.1. արգելվում է օգտագործել այլընտրանքային հավաստագրերի տրամադրումը՝

3.1.1. նվազեցնելու անձնակազմի անդամների թիվը նավի վրա.

3.1.2. մասնագիտական ազնվության վրա բացասաբար ազդելու կամ ծովագնացների մասնագիտական որակավորումն իջեցնելու համար, կամ

3.1.3. հիմնավորելու համար շարժիչի խցիկի եւ նավիգացիոն կամրջակի հերթապահ սպաների համակցված պարտականությունների վերապահումը հավաստագիր կրող մեկ անձի ցանկացած կոնկրետ հերթապահության ժամանակ.

3.2. հրամանատարություն ստանձնած անձը պետք է նշանակվի որպես նավապետ եւ այլընտրանքային հավաստագրման համար իրականացվող ցանկացած միջոցառում չպետք է բացասաբար ազդի նավապետի եւ այլ անձանց իրավական կարգավիճակի ու իրավասությունների վրա:

4. 1-ին եւ 2-րդ կետերում զետեղված սկզբունքները պետք է ապահովեն, որ պահպանվի թե՛ տախտակամածի սպաների, եւ թե՛ մեխանիկների որակավորումը:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԱՅՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏՐԱՄԱԴՐԵԼ ԵՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ԿԱՄ ՈՐՈՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է 19(2) ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳԻՐԸ

1. Երրորդ երկիրը պետք է ԾՎՀՀ կոնվենցիայի կողմ լինի:
2. Ծովում անվտանգության հարցերով կոմիտեն պետք է հաստատի, որ երրորդ երկիրը լիակատար եւ ամբողջությամբ կիրառում է ԾՎՀՀ կոնվենցիայի դրույթները:
3. Հանձնաժողովը, Եվրոպական ծովային անվտանգության գործակալության աջակցությամբ եւ ցանկացած շահագրգիռ անդամ պետության հնարավոր ներգրավմամբ, ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք կարող են ներառել կայանքների ստուգում եւ ընթացակարգեր, պետք է հաստատած լինի, որ որակավորման ստանդարտին, հավաստագրերի տրամադրմանը եւ հաստատմանը, ինչպես նաեւ գրանցումներ վարելուն ներկայացվող պահանջներն ամբողջովին բավարարվել են, եւ ստեղծվել է որակի ստանդարտների համակարգ՝ համաձայն ԾՎՀՀ կոնվենցիայի 1/8 կարգավորման:
4. Անդամ պետության ընկերության եւ տվյալ երրորդ երկրի միջեւ կնքվում է համաձայնագիր՝ ըստ որի անհապաղ տեղեկացվում է դասընթացի կարգի եւ ԾՎՀՀ կոնվենցիային համապատասխան տրամադրվող հավաստագրման ցանկացած զգալի փոփոխության մասին:
5. Անդամ պետությունները ներմուծել են միջոցներ՝ ապահովելու, որ այն ծովագնացները, ովքեր ճանաչման են ներկայացրել հավաստագրեր ղեկավար մակարդակում գործառույթներ իրականացնելու համար, տիրապետեն պատշաճ գիտելիքների անդամ պետության ծովային օրենսդրության վերաբերյալ՝ համապատասխան այն գործառույթներին, որոնք թույլատրված են իրականացնելու:
6. Եթե անդամ պետությունը ցանկանում է լրացնել երրորդ երկրի համապատասխանության գնահատումը՝ գնահատելով ծովում աշխատելու համար վերապատրաստում իրականացնող որոշակի հաստատություններ, այն պետք է գործի ԾՎՀՀ կանոնագրքի Ա-1/6 բաժնի դրույթներին համապատասխան:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած ճանաչված Հրահանգն իր հետագա փոփոխությունների ցանկով

(նշված 32-րդ հոդվածում)

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2001/25/ԵՀ հրահանգ (ՊՏ L 136, 18.05.2001թ., էջ 17): | |

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002/84/ԵՀ հրահանգ (ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 53): | only Article 11 |

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003/103/ԵՀ հրահանգ (ՊՏ L 326, 13.12.2003թ., էջ 28): | |

Հանձնաժողովի 2005/23/ԵՀ հրահանգ (ՊՏ L 62, 09.03.2005թ., էջ 14): | |

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2005/45/ԵՀ հրահանգ (ՊՏ L 255, 30.09.2005թ., էջ 160): | միայն 4-րդ հոդվածը |

ՄԱՍ Բ

Ազգային իրավունքում փոխատեղման ժամկետների ցանկը

(նշված 32-րդ հոդվածում)

Հրահանգը | Փոխատեղման վերջնաժամկետը |

2002/84/ԵՀ | 2003 թվականի նոյեմբերի 23 |

2003/103/ԵՀ | 2005 թվականի մայիսի 14 |

2005/23/ԵՀ | 2005 թվականի սեպտեմբերի 29 |

2005/45/ԵՀ | 2007 թվականի հոկտեմբերի 20 |

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

2001/25/ԵՀ հրահանգ | Սույն հրահանգը |

Հոդված 1 | Հոդված 1 |

Հոդված 2, ներածություն | Հոդված 2, ներածություն |

Հոդված 2, առաջինից չորրորդ պարբերությ | 2(ա)–ից (դ) հոդված |

3–ից 7–րդ հոդվածներ | 3–ից 7–րդ հոդվածներ |

7ա հոդված | Հոդված 8 |

Հոդված 8 | Հոդված 2 |

Հոդված 9(1), ներածություն | Հոդված 10(1), առաջին ենթապարբերություն, ներածություն |

Հոդված 9(1)(ա) եւ (բ) | Հոդված 10(1), առաջին ենթապարբերություն, (ա) եւ (բ) |

Հոդված 9(1)(գ), առաջին նախադասություն | Հոդված 10(1), առաջին ենթապարբերություն,
(գ) |

Հոդված 9(1)(գ), երկրորդ նախադասություն | 10(1) հոդված, երկրորդ ենթապարբերություն |

Հոդված 9(1)(դ) | Հոդված 10(1), առաջին ենթապարբերություն, (դ) |

Հոդված 9(2) եւ (3) | Հոդված 10(2) եւ (3) |

Հոդված 10 | Հոդված 11 |

Հոդված 11 | Հոդված 12 |

Հոդված 12 | Հոդված 13 |

Հոդված 13 | Հոդված 14 |

Հոդված 14 | Հոդված 15 |

Հոդված 15 | Հոդված 16 |

Հոդված 16(1), ներածություն | Հոդված 17(1), ներածություն |

Հոդված 16(1), առաջինից չորրորդ պարբերությ | Հոդված 17(1)(ա)–ից (դ) |

Հոդված 16(2), ներածություն | Հոդված 17(2), ներածություն |

Հոդված 16(2)(ա)(1) եւ (2) | Հոդված 17(2)(ա)(i) եւ (ii) |

Հոդված 16(2)(բ) եւ (գ) | Հոդված 17(2)(բ) եւ (գ) |

Հոդված 16(2)(դ)(1) եւ (2) | Հոդված 17(2)(դ)(i) եւ (ii) |

Հոդված 16(2)(դ)(3)(i) եւ (ii) | Հոդված 17(2)(դ)(iii), առաջին եւ երկրորդ պարբերություններ |

Հոդված 16(2)(ե) | Հոդված 17(2)(ե) |

Հոդված 16(2)(զ)(1)–ից (5) | Հոդված 17(2)(զ)(i) եւ (v) |

Հոդված 16(2)(է) | Հոդված 17(2)(է) |

Հոդված 17 | Հոդված 18 |

Հոդված 18(1) եւ (2) | – |

Հոդված 18(3), ներածական արտահայտություն | Հոդված 19(1), ներածական
արտահայտություն |

Հոդված 18(3)(ա) | Հոդված 19(2) |

Հոդված 18(3)(բ) | Հոդված 19(3), առաջին ենթապարբերություն |

Հոդված 18(3)(գ) | Հոդված 19(3), երկրորդ ենթապարբերություն |

Հոդված 18(3)(դ) | Հոդված 19(4) |

Հոդված 18(3)(ե) | Հոդված 19(5) |

Հոդված 18(3)(զ) | Հոդված 19(6) |

Հոդված 18(4) | Հոդված 19(7) |

Հոդված 18ա(1), առաջին եւ երկրորդ ենթապարբերություններ | Հոդված 20(1), առաջին եւ
երկրորդ ենթապարբերություններ |

Հոդված 18ա(2), առաջին եւ երկրորդ ենթապարբերություններ | Հոդված 20(2), առաջին եւ
երկրորդ ենթապարբերություններ |

Հոդված 18ա(3)–ից (5) | Հոդված 20(3)–ից (5) |

Հոդված 18ա(6), առաջին եւ երկրորդ նախադասություններ | Հոդված 20(6), առաջին եւ երկրորդ ենթապարբերություններ |

Հոդված 18ա(7) | Հոդված 20(7) |

Հոդված 18բ | Հոդված 21 |

Հոդված 19 | Հոդված 22 |

Հոդված 20(1), ներածություն | Հոդված 23(1), ներածություն |

Հոդված 20(1), առաջին եւ երկրորդ պարբերությ | Հոդված 23(1)(ա) եւ (բ) |

Հոդված 20(2), ներածություն | Հոդված 23(2), ներածություն |

Հոդված 20(2), առաջինից վեցերորդ պարբերությ | Հոդված 23(2)(ա)–ից (զ) |

Հոդված 20(3) | Հոդված 23(3) |

Հոդված 21 | Հոդված 24 |

Հոդված 21ա | Հոդված 25 |

– | Հոդված 26(1) |

Հոդված 21բ, առաջին նախադասություն | Հոդված 26(2), առաջին ենթապարբերություն |

Հոդված 21բ, երկրորդ նախադասություն | Հոդված 26(2), երկրորդ ենթապարբերություն |

Հոդված 22(1), առաջին նախադասություն | Հոդված 27(1), առաջին ենթապարբերություն |

Հոդված 22(1), երկրորդ նախադասություն | Հոդված 27(1), երկրորդ ենթապարբերություն |

– | Հոդված 27(1), երրորդ ենթապարբերություն |

Հոդված 22(3) եւ (4) | Հոդված 27(2) եւ (3) |

Հոդված 23(1) եւ (2) | Հոդված 28(1) եւ (2) |

– | Հոդված 28(3) |

Հոդված 23(3) | – |

Հոդված 24(1) եւ (2) | – |

Հոդված 24(3)(1) եւ (2) | Հոդված 29(ա) եւ (բ) |

Հոդված 25 | Հոդված 30 |

Հոդված 26, առաջին նախադասություն | Հոդված 31, առաջին պարբերություն |

Հոդված 26, երկրորդ նախադասություն | Հոդված 31, երկրորդ պարբերություն |

Հոդված 27 | Հոդված 32 |

Հոդված 28 | Հոդված 33 |

Հոդված 29 | Հոդված 34 |

Հավելվածներ I եւ II | Հավելվածներ I եւ II

Հավելված III | – |

Հավելված IV | – |

– | Հավելված III |

– | Հավելված IV |